ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

7 (96)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 7 (96), 2018

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, տ.գ.թ.

Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
Տնտեսական գիտությունների թեկնածու

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ագլյան
Վահրամ Հովյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 7 (96), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արեստակես Միմավորյան
Կրիտիկական ենթակառուցվածքների նկատմամբ
մոտեցումները Թուրքիայում 4

Վահրամ Հովյան
Թուրքիայի հայ համայնքի ներկա դրության շուրջ 10

Սամվել Մարտիրոսյան
Հայաստանյան ինտերնետի տրանսֆորմացիաները 16

Սամվել Մանուկյան
Ուսանողների պատկերացումները հայկական 1-ին և 2-րդ
հանրապետությունների մասին 20

Արմեն Ղալեչյան
Ժամանակակից (տեղեկատվական) աշխարհի ղեկավարման
թաքնված հնարքները 29

Կարեն Վերանյան
Տարածաշրջանային որոշ գործընթացների շուրջ 35

Անդրանիկ Հովհաննիսյան
Խորհրդարանական կառավարման համակարգը
Ղազախստանում. ռիսկեր և լուծումներ 44

ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Արեստակես Միմավորյան[*]

Տեխնիկական զարգացման ներկա պայմաններում, տարաբնույթ ճգնաժամերի, բնական և տեխնածին աղետների կանխարգելման, ռիսկերի նվազեցմանն ուղղված քաղաքականության մշակման գործում էական նշանակություն են ձեռք բերում կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության և բարելավման աշխատանքները: Նման աշխատանքներում, սովորաբար, տարբեր երկրներում ներգրավված են հանրային նշանակության կարևորագույն օբյեկտների գործունեությունը համակարգող պետական, որոշ դեպքերում՝ մասնավոր սուբյեկտները: Կրիտիկական ոլորտների և դրանց ենթակառուցվածքների պաշտպանության, անվտանգության մակարդակի բարձրացման, թարմացման ու արդիականացման, ֆինանսական ներդրումների ավելացման հետ կապված հիմնահարցերը համեմատաբար վերջերս են հայտնվել Թուրքիայի պետական քաղաքականության ուշադրության կենտրոնում:

Կրիտիկական ենթակառուցվածքների և դրանց պաշտպանության հարցերը հիմնականում գնահատվել են «ազգային տեղեկատվական անվտանգության» համատեքստում: 1990-ականներից մինչև 2006թ. տեղեկատվական ավտանգության համակարգված աշխատանքները տարվում էին և ոլորտի անվտանգության վերաբերյալ օրինագիծն էլ մշակվում էր Ազգային պաշտպանության նախարարության կողմից, որի շրջանակներում նախատեսվում էր տեխնիկական, տեխնոլոգիական և դրանցից ածանցված տասնյակ միջոցառումների իրագործում, սակայն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով տվյալ օրենսդրական նախագիծը հավանության չի արժանացել:

2012թ. Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների խորհրդի (*TÜBİTAK*) ներգրավմամբ, Տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարության հովանավորությամբ՝ Զարգացման նախարարու-

[*] «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ղեկավար:

թյան ներդրումային ծրագրերին նվիրված *«Կրիտիկական ենթակառուցվածքների տեղեկատվական անվտանգության կառավարման նախագծով»* ակտուալ դարձավ կիբեռանվտանգության հարցը՝ ենթակառուցվածքների պաշտպանության տեսանկյունից: Նույն թվականին ստեղծվեց *Կիբեռանվտանգության խորհուրդը,* որն առաջին իսկ համաժողովին ընդունեց *Ազգային կիբեռանվտանգության ռազմավարությունը և 2013-2014թթ. գործողությունների պլանը,* որի համաձայն՝ առաջին փուլի համար սահմանվեցին կիբեռանվտանգության հետ անմիջականորեն փոխկապակցված և միմյանց վրա փոխազդող հիմնական խոցելի ոլորտներ, որոնք են. *1. տրանսպորտային, 2. էներգետիկ, 3. էլեկտրոնային կապ, 4. ֆինանսաբանկային, 5. ջրային ռեսուրսների կառավարում, 6. հանրային ծառայությունների (կրիտիկական)*[1]*:*

Սահմանելով և հաշվի առնելով վերը հիշատակված ոլորտները՝ Տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարության կողմից հրապարակվեց *«Ազգային կիբեռանվտանգության ռազմավարություն և 2016-2019թթ.գործողությունների պլան»* նոր նախագիծը, որտեղ գնահատվել են հիմնական սպառնալիքներն ու համակարգի հետ կապված ռիսկերը (ներքին և անդրսահմանային կիբեռհարձակումներ և այլն), նաև մասնակիորեն դրանց անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված այնպիսի ռազմավարական նպատակներ, ինչպիսիք են կրիտիկական ենթակառուցվածքների ինվենտարիզացիան և պաշտպանությունը, կիբեռհանցագործությունների դեմ պայքարի ուժեղացումը, կիբեռանվտանգության էկոհամակարգի զարգացումը, կադրերի (վերա)պատրաստումը, կիբեռանվտանգության ինտեգրումն ազգային անվտանգությանը, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների նորացումը և հարակից այլ հարցեր[2]: Վերոհիշյալ ոլորտների հետ կապված առաջադրանքների և բուն աշխատանքների իրագործման գլխավոր պատասխանատուներն են մի շարք գերատեսչական մարմիններ (դրանց թվում են գրեթե բոլոր ուժային կառույցները) և ենթակառուցվածքների անվտանգությունն ապահովող առանձին ստորաբաժանումներ:

[1] Հարկ է նշել, որ Կիբեռանվտանգության խորհրդի անդամները ներկայացնում են գրեթե բոլոր պետական հաստատությունները, տե՛ս http://www.resmigazete.gov.tr/eskiler/2012/10/20121020-18-1.pdf:

[2] 2016-2019 Ulusal siber güvenlik stratejisi, http://www.udhb.gov.tr/doc/siberg/2016-2019 guvenlik.pdf.

Միևնույն ժամանակ, բազմաթիվ գիտահետազոտական և ակադեմիական հաստատություններ իրենց գիտաստեղծագործական, վերլուծական աշխատանքներով և գործնական առաջարկություններով մասամբ աջակցում են կրիտիկական, խոցելի համարվող ենթակառուցվածքների սահմանման, ռիսկերի նվազեցման և այլ հարցերին[3]: Այս համատեքստում առանձնահատուկ է Թուրքիայի գիտատեխնիկական հետազոտությունների խորհրդի դերը գիտատեխնոլոգիական քաղաքականության ռազմավարական մշակման և պլանավորման գործում: Խորհրդին կից գործող Կիբեռանվտանգության ինստիտուտի կրթական ծրագրի կիբեռանվտանգության կրթական պորտալի միջոցով իրականացվում է համակարգչային տեխնոլոգիաների, տեղեկատվական հոսքերի կոնտենտ վերլուծությունների, նաև կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ոլորտների համար մասնագիտական կազմի պատրաստում[4]: Նշենք, որ Թուրքիայի Քաղիր Հաս համալսարանում 2018 թվականից գործում է կիբեռանվտանգության և կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության կիրառական և հետազոտական նշանակության գիտաուսումնական կենտրոն[5]:

Կրիտիկական ոլորտների ռիսկերը

Թուրքիայի Աղետների և արտակարգ իրավիճակների կառավարման վարչության շրջանակներում գործող տեխնոլոգիական աղետների ռիսկերի նվազեցման աշխատանքային խմբի կողմից 2014թ. հրապարակվեց Թուրքիայի «2014-2023թթ. կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանության ճանապարհային քարտեզ» զեկույցը[6]: Համաձայն դրա, Թուրքիայի կրիտիկական ոլորտներ են համարվում.

- Էներգետիկան
- Կիբեռանվտանգությունը, կապի տեխնոլոգիաները
- Տրանսպորտային (ծովային և ցամաքային) կոմունիկացիաները

[3] Տե՛ս, օրինակ, Միջազգային ռազմավարական հետազոտությունների կազմակերպության իրականացրած Թուրքիայի էներգետիկ ոլորտի կրիտիկական ենթակառուցվածքների անվտանգության հարցերին նվիրված հետազոտական զեկույցը, Hasan Selim Özertem, Arzu Celalifer Ekinci, Betül Buke Karaçin, Kritik Enerji Altyapı Güvenliği Projesi Sonuç Raporu, https://www.jstor.org/stable/resrep14227,

[4] Siber güvenlik eğitim kategorileri, https://egitim.sge.gov.tr/.

[5] http://www.khas.edu.tr/news/1754.

[6] 2014-2023 Kritik Altyapıların Korunması Yol Haritası Belgesi, https://www.afad.gov.tr/upload/Node/3910/xfiles/kritikaltyapi-son.pdf

- Մշակույթը և տուրիզմը
- Ջրային ռեսուրսների կառավարումը/ջրամբարների պաշտպանությունը
- Բանկային և ֆինանսական համակարգը
- Առողջապահությունը
- Գյուղատնտեսությունը և սննդամթերքի անվտանգությունը
- Բարձր տեխնոլոգիաները
- Հանրային պաշտպանության ոլորտը։

Այս ոլորտների արդյունավետության վրա ազդող սպառնալիքների (աղետների) աղբյուր են համարվում.

1. **Բնական՝** երկրաբանական, օդերևութաբանական, բիոլոգիական երևույթները
2. **Մարդկային գործոնով պայմանավորված վտանգներ՝** տեղեկատվական պատերազմ, կիբեռհանցագործություններ, միջազգային և տեղական մասշտաբների ահաբեկչական գործողություններ, տրանսպորտային խոշոր պատահարներ, պատերազմներ, տեխնոլոգիական վտանգներ և այլն։

Դրանց առկայությամբ պայմանավորված՝ առաջանում են միկրո- և մակրոմակարդակների աղետներ՝ ազդելով ենթակառուցվածքների վրա ու խաթարելով դրանց կենսագործունեությունը, ընդ որում՝ նման իրավիճակներում միմյանց հետ փոխկապակցված ենթակառուցվածքներից մեկի խափանումը կարող է ազդել մյուսների վրա։ Նման աղետներից են.

1. **Բնական՝** երկրաշարժեր, սողանքներ, ջրհեղեղներ, ձյունահյուսեր
2. **Տեխնածին՝** խոշոր արդյունաբերական համալիրների, ռադիոակտիվ և միջուկային խնդիրներով պայմանավորված, ծովային և ցամաքային (երկաթուղային) տրանսպորտային հանգույցների, վտանգավոր նյութերի տրանսպորտային փոխադրման հետ կապված աղետներ, էկոլոգիական (կլիմայական փոփոխություններ) աղետներ և այլն[7]։

[7] Թուրքիայի կառավարությանն առընթեր Աղետների և արտակարգ իրավիճակների կառավարման վարչության շրջանակներում առանձին-առանձին գնահատված են թվարկված աղետների առաջացման հետևանքով ի հայտ եկող ռիսկերը, հնարավոր զարգացումներն ու դրանց հետ առնչություն ունեցող ենթակառուցվածքների բարելավման հիմնահարցերը, տե՛ս https://www.afad.gov.tr/tr/3498/Kurumsal-Raporlar

Ակնհայտ է, որ նման աղետները կարող են հանգեցնել ենթակառուցվածքների քայքայման, ազդել կոորդինացիոն և օպերատիվ գործողությունների վրա և նույնիսկ կարճաժամկետ կամ երկարաժամկետ կտրվածքով հանգեցնել համակարգային փլուզման: Հաշվի առնելով այդպիսի հնարավոր զարգացումներից եկող ռիսկերը՝ կրիտիկական ենթակառուցվածքների սահմանման և անվտանգության հարցերը դրված են Թուրքիայի այն պետական կառույցների վրա, որոնք պատասխանատու են իրենց ոլորտների համար:

Ստորև թվարկված հաստատություններն, ըստ էության, իրենց իրավասությունների շրջանակներում պետք է նպաստեն նաև ենթակառուցվածքների կատարելագործմանն ինչպես ոլորտներում նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ, մասնագիտական կադրերի «աճեցմամբ», այնպես էլ ենթահամակարգերի զարգացմամբ և պաշտպանունակության բարձրացմամբ:

Համաձայն Աղետների և արտակարգ իրավիճակների կառավարման վարչության զեկույցի, այդ շրջանակների մեջ են մտնում հետևյալ կառույցները.

1. **Էներգետիկ ոլորտ՝** Թուրքիայի միջուկային էներգետիկայի կազմակերպություն, Էներգետիկայի նախարարություն, Էներգետիկ շուկայի կարգավորման կազմակերպություն
2. **Տրանսպորտային ոլորտ՝** Տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարություն
3. **Կապի ոլորտ՝** Տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի հաստատություն, Տրանսպորտի և ենթակառուցվածքների նախարարություն
4. **Ջրային ռեսուրսների կառավարում՝** Գյուղատնտեսության և անտառտնտեսության նախարարություն
5. **Ֆինանսաբանկային ոլորտ՝** Գանձապետարանի և ֆինանսների նախարարություն, Թուրքիայի կապիտալի շուկաների խորհուրդ, Բանկային գործերի կարգավորման և վերահսկողության գործակալություն
6. **Հանրային պաշտպանության ոլորտ՝** Ներքին գործերի նախարարություն
7. **Առևտրաարդյունաբերական ոլորտ՝** Արդյունաբերության և տեխնոլոգիաների նախարարություն, Առևտրի նախարարություն, Թուրքիայի պալատների և բորսաների միություն

8. **Առողջապահության ոլորտ՝** Առողջապահության նախարարություն
9. **Մշակույթ և տուրիզմ՝** Մշակույթի և զբոսաշրջության նախարարություն
10. **Գյուղատնտեսության ոլորտ՝** Գյուղատնտեսության և անտառտնտեսության նախարարություն:

Ամփոփելով՝ նշենք, որ կրիտիկական ոլորտների հիմնախնդիրները Թուրքիայի պետանվտանգության մասն են կազմում, հետևաբար՝ գտնվում են երկրի բարձրագույն իշխանությունների ուշադրության կենտրոնում, համապատասխան կառույցների կողմից սահմանվում և գնահատվում են խոցելի ենթակառուցվածքները, դրանց մեջ մտնող օբյեկտների քանակը, դրանց փոխազդեցությունները և անվտանգային սպառնալիքները: Հարկ է նաև արձանագրել, որ կրիտիկական ենթակառուցվածքների պաշտպանությանն ուղղված ռազմավարական քայլերի իրագործման ճանապարհին կիրառվում է միջազգային փորձը՝ հաշվի առնելով Թուրքիայի յուրահատկությունները:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱ ԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Վահրամ Հովյան[*]

2018թ. օգոստոսի 1-ին Կ.Պոլսի «Նոր Մարմարա» օրաթերթը տեղեկություն հրապարակեց, համաձայն որի՝ Թուրքիայի կրոնական փոքրամասնությունների հոգևոր և համայնքային առաջնորդները հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ նշելով, որ այդ երկրում կրոնական փոքրամասնությունների նկատմամբ որևէ ճնշում չկա, նրանք ազատ են իրենց կրոնական-պաշտամունքային և համայնքային գործունեության մեջ, իսկ առկա փոքր խնդիրները լուծելու նպատակով համագործակցում են իշխանությունների հետ։

Մինչդեռ պատրիարքարանի Կրոնական ժողովի ատենապետ Սահակ եպս. Մաշալյանը հուլիսի 6-ին նորընտիր նախագահ Ռեջեփ Էրդողանին հղած բաց նամակում ահազանգում է հայ համայնքի թվաքանակի ահռելի չափերով նվազման մասին՝ մատնանշելով, որ դա հետևանք է ճնշումների քաղաքականության։ Մաշալյանը որպես հիմնախնդիրներ մատնանշում է Մեսրոպ պատրիարք Մութաֆյանի ծանր հիվանդությունից հետո շուրջ 10 տարի նոր պատրիարք ընտրելու, եկեղեցիները կառավարող Թաղային խորհուրդների ընտրության անհնարինությունը, հոգևորականներ պատրաստելու համար քրիստոնեական ուսումնական հաստատությունների բացակայությունը։ Ըստ Սահակ սրբազանի՝ այսպես շարունակվելու դեպքում հայ համայնքը մոտ ապագայում լիովին կսպառվի։

Կրոնական փոքրամասնությունների առաջնորդների հիշյալ հայտարարությանն անմիջապես հետևեց Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր, Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության անդամ Կարո Փայլանի առարկությունը։ Վերջինս, կրկնելով Սահակ սրբազանի կողմից բարձրաձայնված խնդիրները, պատկերավոր ավելացրեց, որ հայ համայնքի ներկայացուցիչները աղավնու վախկոտության մեջ են։

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար, Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ։

Այս հակասական հայտարարությունները որոշակի լուսաբանության անհրաժեշտություն են առաջ բերում: Քանի որ, մի կողմից՝ Թուրքիայի հայ համայնքին առնչվող բոլոր խնդիրներին անհնար է անդրադառնալ մեկ հոդվածի շրջանակներում, մյուս կողմից էլ՝ նոր պատրիարքի, թաղային խորհուրդների ընտրության, հոգևոր-կրթական հաստատությունների հիմնահարցերին բավական լայն անդրադարձ արդեն իսկ կա լրագրողական և վերլուծական հարթություններում, սույն վերլուծության մեջ խնդիրը կփորձենք դիտարկել մեկ այլ՝ եկեղեցական գույքի կամ որ նույն է՝ հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման և ըստ նպատակի օգտագործման տեսանկյունից:

Այս առումով վերջին շրջանում նկատելի են ինչպես դրական տեղաշարժեր, այնպես էլ մտահոգիչ երևույթներ: Դրական տեղաշարժերից արժե հիշատակել երեքամյա ընդմիջումից հետո Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցում տարին մեկ անգամ պատարագ մատուցելու արտոնության վերականգնումը: Այս տարի պատարագը տեղի ունեցավ սեպտեմբերի 9-ին:

2018թ. մի փոքրիկ հաղթանակ էլ արձանագրվեց բռնագրավված եկեղեցական գույքի վերադարձման հարցում: Փետրվարին երեք և կես տարի տևած դատական գործընթացից հետո Թուրքիայի Վճռաբեկ դատարանի վճռով Կ.Պոլսի «Սանասարյան տան» շենքը ճանաչվեց որպես Հայոց պատրիարքարանի սեփականություն: Սույն դատական ակտը կարևոր է երկու առումներով.

- Տնտեսական՝ շենքի վարձակալության հանձնումը կարող է նշանակալի եկամուտներ բերել պատրիարքարանին:
- Նախադեպային՝ դատարանի վճիռը կարող է հող նախապատրաստել նաև բռնագրավված մյուս կալվածքների վերադարձի համար:

Այսպիսով, թեև շենքի հանձնումը պատրիարքարանին կարող է ձգձգվել մինչև մեկ տարի, այնուամենայնիվ, հիշյալ դատական ակտը հայկական համայնքային շրջանակների կողմից դիտվում է որպես հաղթանակ[1]:

Մտահոգիչ երևույթներից է այն, որ չնայած Կ.Պոլսի Հայոց պատրիարքության գործադրած ջանքերին, դեռևս իր լուծմանն է սպասում Տիգրանակերտի (Դիարբեքիր) 19-րդ դարի հայկական Ս. Կիրակոս եկե-

[1] Կա նաև կարծիք, որ Թուրքիայի իշխանություններն այդ քայլին գնացին նոր պատրիարքի ընտրության գործընթացը տապալելուց հետո հայ համայնքում առաջացած դժգոհությունը մեղմելու նպատակով:

ղեցու[2] վերանորոգման հարցը, որը լրջորեն վնասվել էր ահաբեկչական խմբավորումների և Թուրքիայի զինված ուժերի բախման հետևանքով: Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանը սույն խնդրով դիմել է երկրի կենսոլորտի և քաղաքաշինության նախարար Մեհմեդ Յոզհասեքին, ինչպես նաև Վագըֆների ընդհանուր տնօրենին: Երկուսն էլ դրական են արձագանքել փոխանորդի դիմումին, սակայն գործնական քայլեր այս ուղղությամբ դեռևս ձեռնարկված չեն:

Այլ մտահոգիչ հանգամանք է այն, որ թուրքական պետության կողմից հայկական պատմամշակութային հուշարձանների վերականգնումը հետապնդում է միայն զբոսաշրջությունը զարգացնելու նպատակ: Դրա ամենապերճախոս վկայությունը Վանի Աղթամար կղզու Սուրբ խաչ հայկական եկեղեցու օրինակն է, որը, թեև վերանորոգվել է թուրքական պետության միջոցներով, սակայն չունի եկեղեցու կարգավիճակ: Այն հանդես է գալիս որպես թանգարանային արժեք: Սկզբում թուրքական իշխանությունների թույլտվությամբ տարեկան մեկ անգամ պատարագ էր մատուցվում եկեղեցում: Հետագայում արգելվեց նաև դա, ինչը որոշակի վնաս էր երկրի զբոսաշրջությանը: Երեք տարվա ընդմիջումից հետո՝ միայն այս տարի, թուրքական իշխանությունները, հավանաբար հաշվի առնելով երկրի տնտեսական անկումը վերջին շրջանում և զբոսաշրջության դերը Թուրքիայի տնտեսության մեջ, կրկին թույլատրեցին անցկացնել պատարագ: Ակնկալվում էր, որ դրա արդյունքում Թուրքիա կայցելի մոտ 3000 զբոսաշրջիկ: Նախկինում այս առումով առավելագույն թիվը եղել է 7000:

Այն, որ Թուրքիայի համար Վանի Աղթամար կղզու Սուրբ խաչ եկեղեցին սոսկ թանգարանային նմուշ է զբոսաշրջության զարգացման համար, երևում է եկեղեցու հարակից տարածքում գտնվող հայկական գերեզմանատան նկատմամբ պետության վերաբերմունքից: Գերեզմանատունը, մատնված լինելով անտարբերության ու անհոգ վերաբերմունքի պատկան մարմինների կողմից, ներկայում գտնվում է անմխիթար վիճակում: Այն նույնիսկ ծառայում է որպես զվարճության և ժամանցի վայր զբոսաշրջիկների համար: Ստացվում է, որ, վերականգնելով հայկական եկեղեցին, թուրքական պետությունը, այնուամենայնիվ, արհամարհական վերաբերմունք ունի եկեղեցու տարածքի մաս կազմող հայկական

[2] Երկարատև ընդմիջումից հետո եկեղեցին վերաբացվել էր 2011թ.:

ժառանգության մեկ այլ հատվածի նկատմամբ և կամա թե ակամա նպաստում է վերջինիս ոչնչացմանը։

Հայկական պատմամշակութային ժառանգության նկատմամբ Թուրքիայի սոսկ տնտեսագիտական մոտեցումը երևում է նաև այն հանգամանքով, որ պետությունը ուշադրություն է դարձնում միայն այն եկեղեցիների վրա, որոնք ունեն թանգարանային արժեք և հետաքրքրություն կարող են ներկայացնել զբոսաշրջիկների համար։ Իսկ այն հուշարձանները, որոնք այդ տեսակետից մեծ հետաքրքրություն չեն ներկայացնում, լիովին այլ վերաբերմունքի են արժանանում պետության կողմից՝ ա) դիտավորյալ կամ պետության լռելյայն թույլտվությամբ ենթարկվում են ոչնչացման, բ) օգտագործվում են այլ նպատակներով, գ) որպես «լքյալ գույք» վաճառվում են մասնավոր անձանց, դ) պատկան մարմինների անտարբերության արդյունքում ժամանակի ընթացքում ենթարկվում են «բնական» մաշման և տարերային աղետների (երկրաշարժեր, սողանքներ և այլն) ու գանձագողերի հասցրած հարվածներին։

Այս առումով վերջին ամենաթարմ օրինակներից բերենք հետևյալները.

- Բուրսայի Սեթբաշը թաղամասում գտնվող 300-ամյա հնության հայկական եկեղեցու շենքը, որը նախկինում վաճառվել էր մասնավոր անձի և օգտագործվում էր զանազան նպատակներով, վերջերս սեփականատիրոջ կողմից կրկին հանվել է վաճառքի՝ $1.5 մլն արժեքով։
- Ուրֆայի Գերմուշ գյուղի հայկական Ս. Աստվածածին եկեղեցին, որը մինչև 2013թ. օգտագործվել է որպես անասնագոմ, «կը մարտնչի» ո՛չ միայն բնութեան տարերային աղէտներու, այլ նաեւ գանձագողերու յաճախակի յարձակումներու դէմ»[3]։ Չնայած եկեղեցու և իր շրջակայքի զբոսաշրջության գոտի հայտարարված լինելու հանգամանքին, լիակատար անտարբերության պայմաններում նրա պատերը խարխուլ վիճակում են և կարող են վերջնականապես փլվել[4]։
- Աքշեհիր քաղաքի հայկական եկեղեցիներից մեկը, որը կառուցվել է 19-րդ դարում, թեև վերանորոգվել է պետության կողմից, սակայն ենթարկվել է վերափոխության։ Այն նախատեսվում է օգտագործել որպես երգիծաբանների մշակութային տուն։

[3] «Նոր Մարմարա», օգոստոսի 16, 2018թ.։

[4] Սույն խնդիրը կարելի է վերագրել նաև վերջին շրջանում Թուրքիայի տնտեսական դժվարություններին։

- Կեսարիայի Ս. Աստվածածին եկեղեցին, որ նախկինում օգտագործվել է որպես ոստիկանական բաժին և մարզասրահ, ներկայում նախատեսվում է վերածել գրադարանի: Այդ նպատակով քաղաքապետարանն արդեն իրականացրել է վերանորոգչական-վերականգնողական աշխատանքներ:
- Էսքիշեհիրի Սիվրիհիսարի շրջանի հայկական Ս. Երրորդություն եկեղեցին, որը կառուցվել է 1650թ., վերջերս վերանորոգվել է Թուրքիայի մշակույթի նախարարության կողմից, սակայն նախատեսված է ծառայեցնել մշակութային ձեռնարկների իրականացմանը: Ուշագրավ է, որ եկեղեցին վերանորոգելիս մշակույթի նախարարությունը նրա բակում ստեղծել է արձանների պուրակ, ուր տեղադրվել են Աթաթյուրքի և Քյազիմ Քյարաբեքիր փաշայի, նրանց կողքին՝ թուրք մշակութային գործիչների արձանները:

Հայկական պատմամշակութային հուշարձանները զբոսաշրջության զարգացմանը ծառայեցնելու նպատակը անթաքույց արտահայտվել է նաև Թուրքիայի պատկան մարմինների կողմից: Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցու առնչությամբ Վանի Առևտրական պալատի Վարչական խորհրդի անդամ Մուրադ Բեյազն ասել է. «Կրնանք Վանը դարձնել Թուրքիոյ ամէնէն կարեւոր զբօսաշրջական կեդրոններէն մէկը»[5]:

Այն, որ հայկական որոշ եկեղեցիների վերականգնումը չի հետապնդում կրոնական փոքրամասնությունների իրավունքների վերականգնման նպատակ, երևում է նաև այդ երևույթին թուրքական հասարակական շրջանակների որոշակի հակազդեցությամբ: Այսպես, Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցում տարեկան մեկ անգամ պատարագ մատուցելու արտոնության վերականգնումը որոշակի խանդ է առաջ բերել Թուրքիայում: Այդ առնչությամբ «Յենի Ագիթ» թերթի հրապարակած մի հոդվածում դժգոհություն է արտահայտվում առ այն, որ մինչ քրիստոնյաները կարողանում են կրոնական արարողություններ իրականացնել թանգարանի կարգավիճակ ունեցող եկեղեցիներում, մուսուլմանները զրկված են նման արտոնությունից Այա Սոֆիայի մզկիթում:

Այսպիսով, Թուրքիայի կողմից հայկական պատմամշակութային ժառանգության վերականգնման քաղաքականությունը հետապնդել է եր-

[5] «Նոր Մարմարա», օգոստոսի 20, 2018թ.:

կու նպատակ՝ ա) Եվրոպական ինտեգրման (Եվրոպական միությանն անդամակցելու) նկրտումների համատեքստում Թուրքիայի՝ որպես ժողովրդավարական և փոքրամասնությունների նկատմամբ հանդուրժողական երկրի, կերպարի ստեղծում և բ) զբոսաշրջության խրախուսում: Առաջին գործոնը, կապված Եվրոպական միությանը Թուրքիայի անդամակցության մշուշոտ հեռանկարի, Թուրքիա-Արևմուտք հարաբերություններում վերջին շրջանում նկատվող լարվածության և Թուրքիայի արտաքին քաղաքական գերակայությունների փոփոխության հետ, աստիճանաբար կորցնում է իր հրատապությունն ու ազդեցությունը: Երկրորդ գործոնը, պայմանավորված վերջին շրջանում Թուրքիայի տնտեսական աննպաստ դրությամբ, աստիճանաբար վերականգնում է իր նախկին ազդեցությունը:

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԸ

Սամվել Մարտիրոսյան[*]

Հայաստանյան ցանցի հատվածը վերջին մեկ տարվա ընթացքում խոր վերաձևափոխումների ճանապարհին է: Բավական լուրջ փոփոխությունները կուտակվում են և մեծ ազդեցություն են ունենալու առաջիկա տարիների ինչպես տեղեկատվական դաշտի զարգացման, այնպես էլ այլ, հարակից տնտեսական, հասարակական, քաղաքական գործընթացների վրա: Շատ պրոցեսներ արագացել են շնորհիվ թավշյա հեղափոխության, որը լրջորեն «թափ տվեց» տեղեկատվական դաշտը[1]:

Որո՞նք այն են հիմնական քանակական և որակական փոփոխությունները, որոնք էական ազդեցություն կթողնեն մոտ ապագայի զարգացումների վրա.

ա. Ինտերնետից օգտվողները դարձել են շատ ավելի մոբիլ: Դա հետևանք է, մի կողմից, սմարթֆոնների քանակի կտրուկ աճի, մյուս կողմից՝ բջջային օպերատորները կտրուկ իջեցրել են բջջային հեռախոսներով ինտերնետից օգտվելու սակագները, ինչի հետևանքով միջին օգտատիրոջ համար արդեն հասանելի է դարձել ոչ միայն տեքստային և պատկերային բովանդակությունը, այլ նաև տեսանյութերը և ուղիղ եթերները: Դեռևս մեկ տարի առաջ հիմնական օգտվողները տեսանյութ դիտելիս ստիպված էին գտնել *Wi-Fi* կապ: Այսօր շատերն առանց կաշկանդվելու են դիտում տեսանյութերը՝ «ոտքի վրա»: Զուգահեռ նկատվել է այն բաժանորդների կտրուկ աճ, որոնք հեռախոսով են օգտվում ինտերնետ կապից: Այս ամենը տեսանյութային բովանդակությունը հասանելի է դարձնում օգտատերերին շուրջօրյա, այլ ոչ միայն այն ժամերին, երբ մարդիկ գտնվում են համակարգչի մոտ կամ հասանելի է *Wi-Fi* կապը:

բ. Լրջորեն ձևափոխվում են տեսանյութերը և հեռուստաարտադրանքի սպառումը: Արդեն համաշխարհային միտում է երիտասարդների

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[1] *Սամվել Մարտիրոսյան,* Ուղիղ եթերների հեղափոխությունը (ինչպես ձևափոխվեց տեղեկատվական դաշտը), http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=17416&sphrase_id=68116

շրջանում հեռուստացույցից համացանցին շրջվելը, ինչը բերել է այն բանին, որ հեռուստաընկերությունները պարզապես «միգրացվում» են դեպի ցանց և զուգահեռ այնտեղ ևս գործունեություն են ծավալում: Մյուս կողմից՝ հայտնվել են բազմաթիվ վիդեոբլոգերներ, որոնք իրական այլընտրանք և մրցակից են խոշոր հեռուստաընկերությունների համար: Հայաստանում այս գործընթացները մինչև հեղափոխությունը շատ ավելի դանդաղ էին զարգանում, բայց դրանից հետո շատ բան էապես փոխեց: Անընդհատ սոցցանցերով ընթացող ուղիղ եթերները, լայվերը բերեցին աննախադեպ հետաքրքրության այդ տիպի հաղորդակցման հանդեպ: Որպես հետևանք, նկատվեց ինտերնետային հեռարձակում իրականացնող հարթակների բաժանորդների աննախադեպ աճ, տեսանյութերի դիտումները նույնպես ռեկորդային էին: Հասկանալի է, որ հեղափոխական ապրիլ և մայիս ամիսներից հետո դիտումների թիվը նվազել է, սակայն այդ թիվը շարունակում է շատ անգամ գերազանցել մինչհեղափոխական ժամանակաշրջանը (տե՛ս *Նկար 1, 2*).

Նկար 1.

A1+ հեռուստաընկերության Յութուբ ալիքի բաժանորդների թվի աճը և տեսանյութերի դիտումներն ըստ ամիսների: Տվյալներն ըստ Socialblade-ի



Նկար 2.

U1+ հեռուստաընկերության Յութուբ ալիքի բաժանորդների թվի աճը և տեսանյութերի դիտումներն ըստ ամիսների: Տվյալներն ըստ Socialblade-ի



Նման քանակական աճը, որը դիտվում է ոչ միայն *Յութուբում*, այլ նաև *Ֆեյսբուքի* տեսանյութերի դիտումներում, մեծ հավանականությամբ կբերի ավանդական հեռուստատեսության ազդեցության անկմանը և օնլայն տեսանյութերի գերիշխող դիրքի ձևավորմանը: Անկասկած, ավանդական հեռուստաընկերությունները, որոնք մոտ ժամանակներս արդեն կատարել են կամ կկատարեն դեպի ցանց միգրացիա, կշարունակեն ունենալ իրենց լսարանը, պարզապես արդեն նոր հարթակներում, որոնք նաև թելադրում են ավելի ուժեղ կապ լսարանի հետ: Մյուս կողմից՝ կարելի է ակնկալել ավելի լուրջ մրցակցություն զուտ օնլայն հարթակների, ինչպես նաև վիդեոբլոգերների հետ:

գ. Արմատական փոփոխություններ են կատարվում սոցիալական ցանցերում: Երկու տարի առաջ առաջնային դիրքեր ուներ *Օդնոկլասնիկի* ռուսաստանյան հարթակը[2]: Մեկ տարի առաջ այս հարթակը սկսեց նահանջել, սակայն շարունակում էր լինել թիվ մեկ սոցցանցը Հայաստանում: Հեղափոխությունը վերջնականորեն կոտրեց *Օդնոկլասնիկիի* մենաշնորհը. լսարանի բավական մեծ տոկոս փաստացի ներգաղթեց *Ֆեյսբուք*, քանի որ այստեղ էին իրականացվում հիմնական ուղիղ եթերները: Տվյալ պահին *Ֆեյսբուքը* ամենաայցելվող սոցցանցն է Հայաստանում, որի լսարանը շարունակում է աճել, մինչդեռ *Օդնոկլասնիկին* անընդհատ կորցնում է Հայաստանից իր այցելուներին:

[2] *Սամվել Մարտիրոսյան,* Սոցիալական ցանցերը Հայաստանում. 2016-ի աշուն, https://media.am/Social-networks-in-Armenia-2016-autumn

Զուգահեռ կտրուկ աճ գրանցեցին այլ սոցիալական հարթակները. *Instagram, LInkedin, Twitter*: Այս տարի սկսում է նշմարվել բազմազանություն սոցիալական ցանցերի տեսանկյունից, հասարակությունը կառչած չէ լոկ *Ֆեյսբուքից* և *Օդնոկլասնիկիից*:

Կարելի է եզրակացնել, որ ցանցը կտրուկ ակտիվացել է և դառնում է ավելի բազմազան, ինչը հնարավորություններ է բացում նաև տնտեսական ոլորտում՝ հատկապես հաշվի առնելով, որ տվյալ պահին օնլայն առևտուրը նույնպես վերելք է ապրում Հայաստանում:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սամվել Մանուկյան[*]

Խնդիրը

Ազգային ինքնության հետ կապված հարցերն արդի սոցիոլոգիական կարևորագույն խնդիրների շարքում են: Ինչպես անձի, այնպես էլ հասարակական խմբի, այդ թվում նաև ազգի ինքնությունը բարդ է և բազմաշերտ: Ինքնության կառուցվածքում կարևոր դեր ունի հիշողությունը: Ավելին՝ առանց հիշողության գոյություն չունի որևէ ինքնություն:

Ներկայում գլոբալ փոփոխությունների հիմնական ուղղություններից է գլոբալ քաղաքացիական հասարակության կազմավորումը, ինչը ենթադրում է մարդու՝ բացի անձի մակարդակից ավելի բարձր կարգի ցանկացած ինքնության կազմալուծում և վերացում, այդ թվում սեռային, ընտանեկան, համայնքային, էթնիկ, ազգային և քաղաքակրթական: Այս համատեքստում արդեն քառորդ դար է, ինչ հատվածայնացվում է Հայաստանի պատմությունը: Դա վերաբերում է հատկապես Հայաստանի խորհրդային շրջանի պատմությանը: Չնայած երբեմն Հայաստանի տեղեկատվական դաշտում հայտնվում են նյութեր, որոնք ներկայացնում են Խորհրդային Հայաստանի սոցիալական, գիտական և մշակութային նվաճումները, այնուամենայնիվ, ինֆորմացիոն «մեյնսթրիմն» է Խորհրդային Հայաստանի պատմության վարկաբեկումը, որն ընթանում է «Խորհրդային Հայաստանը գաղութացված, տոտալիտար, մարդատյաց պետություն էր» կոնցեպտի ներքո, որից էլ տրամաբանորեն բխում է, որ «ամոթալի» անցյալից գերադասելի է ձերբազատվել՝ մոռանալ:

Այս համատեքստում առաջանում են մի քանի կարևոր հարցեր՝ ինչպիսի՞ն է Խորհրդային Հայաստանի վերաբերյալ ներկայիս երիտասարդ

[*] «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փորձագետ, սոց.գ.թ.:

սերնդի պատկերացումների ընդհանուր պրոֆիլը, որքանո՞վ է այն համապատասխանում պետությունից ներկայիս երիտասարդների ակնկալիքներին: Այս հարցերին տրված գիտականորեն հիմնավորված պատասխանները կարևոր են պատկերացում կազմելու համար երկրի հասարակությունում Հայաստանի պատմության ընկալման վիճակի, դրա սպոնտան զարգացման ուղղության և հետևանքների վերաբերյալ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ձևավորելու համար դրա բովանդակության այնպիսի մեկնաբանությունը, որը նպաստում է ազգային ինքնության և արժանապատվության պահպանմանը և պաշտպանությանը: Հոդվածում փորձ է կատարված ուրվագծել այդ հարցերի պատասխանները ԵՊՀ ուսանողության օրինակով:

Մեթոդաբանություն

Ուսումնասիրության հայեցակարգը. Հետազոտությունում վեր են հանվել ԵՊՀ ուսանողության կողմից հասարակության առավել պահանջված բնութագրերը: Կառուցվել են Խորհրդային Հայաստանի և արդի Հայաստանի Հանրապետության հասարակություններում այդ բնութագրերի համեմատական պրոֆիլները: Ստացված արդյունքների համադրման միջոցով փորձ է կատարվել ստանալ վերը սահմանված հարցերի պատասխանները: Հետազոտության տվյալները հավաքագրվել են 2016թ.:

Ընտրանքը. Հետազոտության ընդհանուր համակցությունն էին Երևանի պետական համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ուսուցմամբ ուսանողները, ընդամենը 9219 անձ: Իրականացվել է 4-աստիճան շերտավորված (ֆակուլտետ, կուրս, մասնագիտություն, ուսումնական խումբ), կլաստերային, պատահական սկզբնակետով մեխանիկական ընտրանք, ծավալը՝ 314: Վիճակագրական հավաստիության մակարդակը՝ ± 5.0%:

ԵՊՀ-ն Հայաստանի բուհերի առաջատարն է: ԵՊՀ-ում է սովորում Հայաստանի ուսանողության շուրջ 21%-ը: Այդ պատճառով ԵՊՀ ուսանողության ուսումնասիրությունը բավարար հիմքեր է տալիս պատկերացում կազմելու Հայաստանի ուսանողության գիտելիքների մակարդակի, ինչպես նաև պատմական հիշողության մասին: Ընդ որում, հիմնավորված ենթադրություն կարելի է համարել այն, որ այստեղ այդ բնութագրերի մակարդակը հանրապետական միջինից բարձր է:

Արդյունքներ

Ուսանողության համար առավել ընդունելի հասարակության բնութագրերը. Այս կոնցեպտն ուսումնասիրվել է հետևյալ կերպ: Ուսանողներին ներկայացվել է քարտ, որը պարունակում էր հասարակության առավել կարևոր յոթ բնութագրերի ցանկը[1], և հարց է տրվել. «Այս քարտում նշվածներից որո՞նք են Ձեզ համար երեք առավել կարևորները»: Հարցվողին թույլ էր տրվել ներկայացված ցանկից ըստ կարևորության նշել երեք բնութագիր: Հասարակության բնութագրերի ցանկը և ուսանողների կողմից տրված պատասխանների բաշխումները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

ԵՊՀ ուսանողների համար հասարակության առավել կարևոր բնութագրերի տարածվածությունը:

«Այս քարտում նշված-ներից որո՞նք են Ձեզ համար երեք առավել կարևորները»	1-ին կարևորը	2-րդ կարևորը	3-րդ կարևորը	Ընդամենը նշել են
Մասնագիտական կարիերային աճի հնարավորությունը	25%	30%	17%	71%
Սոցիալական արդարությունը	36%	12%	11%	59%
Մարդկանց միջև վստահությունը	10%	14%	32%	56%
Կառուցվածքային սարքերի հնարավորությունը	14%	21%	0%	36%
Քաղաքական ազատությունները	6%	11%	18%	35%
Հարստանալու հնարավորությունը	4%	10%	13%	27%
Հասարակության մեջ իդեալների առկայությունը	5%	3%	8%	17%
Ընդամենը	100%	100%	100%	-

Տվյալները ցույց են տալիս, որ ԵՊՀ ուսանողների համար հասարակության առաջին ամենակարևոր բնութագիրն է **սոցիալական արդարությունը** (այն որպես առաջին ամենակարևոր բնութագիր նշել է հարցվածների 36%-ը), երկրորդը **մասնագիտական և կարիերային աճի հնարավորություններն են** (25%), իսկ երրորդը **վստահությունն է ապագայի նկատմամբ** (14%): Դրանց հետևում է **մարդկանց միջև վստահությունը** (14%): Հատկանշական է, որ որպես առաջին գերակայություն առավել ցածր տարածվածություն ունեն՝ **հարստանալու հնարավորությունը** (4%) որը «մաքուր» կապիտալիստական հասարակարգի կարևորագույն բնութագրերի ինվարիանտն է, **հասարակությունում իդեալների առկայությունը** (5%), որը «մաքուր» սոցիալիստական հասարակության կարևորագույն

[1] Բնութագրերի ցանկը կազմավորվել է ՀՀ կառավարության պատվերով հեղինակի կողմից 2011-2016թթ. իրականացված «Կյանքի որակը Հայաստանում» համապետական մասշտաբի ներկայացուցչական վեց զանգվածային սոցիոլոգիական հետազոտությունների շարքի, ՀՀ ԿԳՆ պատվերով 2013-2015թթ. ընթացքում Հայաստանի ամբողջ ուսանողության շրջանում իրականացված երեք հետազոտությունների տվյալների համադրման միջոցով:

բնութագրերի ինվարիանտն է և **քաղաքական ազատությունները** (6%), որը «մաքուր» քաղաքացիական հասարակության ինվարիանտն է[2]:

Ուսանողների աշխարհայացքի միաչափ գնահատումից («ո՞րն է ամենակարևորը» հարցի միջոցով) բազմաչափ գնահատման («նշեք երեք առավել կարևորները») անցման դեպքում ստանում ենք իրավիճակի այլընտրանքային պատկեր[3]: Պարզվում է, որ ուսանողության շրջանում հասարակության առավել կարևոր բնութագրերից առավել տարածված է անձնական հաջողության հասնելու համար անհրաժեշտ պայմանը՝ **մասնագիտական ու կարիերային աճի հնարավորությունները**, որը երեք հնարավորից նշել է ուսանողների 71%-ը, և որը նշանակալիորեն առաջ է անցել **սոցիալական արդարություն** (նշել է 59%-ը) և **մարդկանց միջև վստահություն** (56%) բնութագրերից:

Խորհրդային Հայաստանի և արդի Հայաստանի Հանրապետության բնութագրերի պրոֆիլները. Պրոֆիլները կազմավորվել են հետևյալ հարցին տրված պատասխանների միջոցով. «Եկեք համեմատենք 1970-80-ական թթ. Սովետական և ներկայիս Հայաստանը: Ձեր կարծիքով, դրանցից ո՞րն **իր ժամանակի համար** ուներ...», որից հետո հաջորդաբար թվարկվել է հասարակության 15 բնութագիր: Բնութագրերը խմբավորվել են չորս պրոֆիլներում. 1. «**Երկրի ընդհանուր զարգացածության պրոֆիլ**», որում տրված է երկրում արդյունաբերության, կրթության, գիտության և մշակույթի զարգացածության համեմատությունը, 2. «**Երկրում սոցիալական կարգի պրոֆիլ**», որում տրված է երկրում կարգ ու կանոնի, սոցիալական արդարության, ապագայի նկատմամբ վստահության,

[2] Ստացված տվյալների համատեքստում անուղղակիորեն իր բացատրությունն է ստանում երիտասարդության շրջանում 2018թ. ապրիլի հայաստանյան «թավշյա հեղափոխության» ընդունելիության բացառիկ բարձր աստիճանը: Սոցիալական անարդարության կարևորագույն պատճառներից է **կոռուպցիան,** քանի որ կոռուպցիայի դեմ պայքարի կոչը գործարկում և կոնսոլիդացնում է սոցիալական անարդարության բացակայության համընդհանուր ընկալումը: Հիշենք, որ 1988թ. գործարկված էր ըստ էության նույնական հայեցակարգ-կարգախոս-ուղերձը. «Կոմունիստական նոմենկլատուրան **տոտալ կոռումպցված է,** որի պատճառով Ղարաբաղի հարցը չի կարող լուծում ստանալ ԽՍՀՄ կազմում»: Այն կիրառվել է որպես ղարաբաղյան շարժման ընդլայնման, կոնսոլիդացման և իմաստափոխման տեխնոլոգիայի առանցք: Եթե ազգային մակարդակում այդ թեզը հանդիսացել է ազգամիջյան հարաբերություններում **անարդարության** շտկման հիմքը, ապա գլոբալ մակարդակում այն հանդիսացել է ԽՍՀՄ-ի՝ որպես **աշխարհաքաղաքական բեռի** և սոցիալիզմի՝ որպես արդար հասարակարգի **քաղաքակրթական հայեցակարգի** կազմալուծման տեխնոլոգիաների հիմքը:

[3] Ակնհայտ է, որ «ամենակարևորը» և «երեք առավել կարևորները» տարբեր սոցիալական տեխնոլոգիաների հայեցակարգային հիմքեր են: Այդ պատճառով ներկայացված երկու՝ «ոչ ամբողջությամբ համընկնող» պրոֆիլները ոչ թե միմյանց հերքում, այլ միմյանց լրացնում են:

մարդկանց միջև վստահության, համամարդկային իդեալներին ձգտման և եկեղեցու նկատմամբ հարգանքի համեմատությունը, 3. «**Երկրում անձի զարգացման հնարավորությունների պրոֆիլ**», որում տրված է քաղաքական ազատությունների, մասնագիտական և կարիերային աճի և հարստանալու հնարավորությունների համեմատությունը, 4. «**Երկրի անվտանգության պրոֆիլ**», որում տրված է հայ ազգի ֆիզիկական և ազգային արժեքների պաշտպանվածության համեմատությունը:

Ստացված արդյունքները՝ խմբավորված ըստ պրոֆիլների, տրված են Գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1.

Խորհրդային Հայաստանի և արդի Հայաստանի Հանրապետության բնութագրերի պրոֆիլները



«**Երկրի ընդհանուր զարգացածության**» վերաբերյալ ուսանողների պատկերացումները ամբիվալենտ են: Նրանք համարում են, որ եթե Խորհրդային Հայաստանն ուներ իր ժամանակի համար ավելի զարգացած արդյունաբերություն և կրթություն, ապա արդի Հայաստանի Հանրապետությունն ունի գիտության և տեխնիկայի ավելի մեծ նվաճումներ և ավելի զարգացած մշակույթ: «**Երկրում սոցիալական կարգի**» տեսակետից Խորհրդային Հայաստանն ավելի զարգացած էր, քան արդի Հայաս-

տանի Հանրապետությունը, բացառությամբ՝ համամարդկային իդեալնե-րի ձգտման և եկեղեցու նկատմամբ հարգանքի առկայության: «**Երկրում անձի զարգացման հնարավորությունների**» և «**Երկրի անվտանգության**» տեսակետից արդի Հայաստանի Հանրապետությունն ավելի զարգացած է, քան Խորհրդային Հայաստանը:

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ ուսանողների պատկե-րացումներում առկա են տարրեր, որոնք համապատասխանում են պատմական իրականությանը, և տարրեր, որոնք չեն համապատասխա-նում: Մասնավորապես, **աղեկվատ չեն ուսանողների պատկերացումնե-րը ՀԽՍՀ-ում և ՀՀ-ում գիտության զարգացման վերաբերյալ**: Դրա մասին են վկայում ՀԽՍՀ 1985թ. և ՀՀ 2016թ. գիտության ոլորտի մի քանի հան-գուցային ցուցանիշները: Մասնավորապես, եթե ՀԽՍՀ-ում կար 253 գի-տական հիմնարկ, ապա ՀՀ-ում՝ միայն 69, ՀԽՍՀ-ում գիտության ոլոր-տում զբաղվածները կազմել են 53800, իսկ ՀՀ-ում՝ 5615, ՀԽՍՀ-ում կար 8150 գիտության դոկտոր, իսկ ՀՀ-ում՝ 2841 (որոնց նշանակալի հատվածը մնացել է ՀԽՍՀ-ից), ՀԽՍՀ-ում կար 6751 գիտության թեկնածու, իսկ ՀՀ-ում՝ 1578 [1, 2]: Ցուցանիշների շարքը կարելի է շարունակել:

Աղեկվատ չեն ուսանողների պատկերացումները **մշակույթի զարգա-ցածության** վերաբերյալ: Դրա մասին է վկայում մասնավորապես այն, որ ՀԽՍՀ-ում հայ և համաշխարհային դասականների հրատարակություն-ների տպաքանակը, որպես կանոն, կազմում էր մի քանի տասնյակ հազար օրինակ, իսկ ՀՀ-ում՝ մի քանի հարյուր: «Կյանքի որակը Հայաստանում 2014» հետազոտությունում, երբ առաջարկվել էր թվարկել մշակույթի հայ գործիչներ, երիտասարդներն առավելապես նշել են ՀԽՍՀ ժամա-նակաշրջանի գրողների, նկարիչների և կոմպոզիտորների: Հարկ է նշել, որ նույն հետազոտության տվյալներով՝ Հայաստանի 18-30 տարեկան բնակ-չությունը նշանակալիորեն ավելի վատ է տեղեկացված համաշխարհային դասական մշակույթի մասին, քան 60 և ավելի տարեկանները:

Աղեկվատ չէ համեմատությունը **Ձգտում դեպի համամարդկային իդեալները** բնութագրի տեսակետից: Ներկայիս ուսանողների շրջանում թերզարգացած են հասարակագիտական գիտելիքները: Մասնավորապես, նրանց միայն 7%-ը գիտի, թե ինչ հասարակարգ է այսօր Հայաստանում [3]: Նրանց պատկերացումներում համամարդկային արժեքները վերաբերում են ընդամենը անձի ազատություններին (ինչը տեղեկատվական դաշտի

առավել ինտենսիվ քարոզվող իդեոլոգեմների համակարգն է), որոնք առաջնային են աշխարհի բնակչության մոտ 15%-ի շրջանում: Կոլեկտիվիստական արժեքները ստվերված են: Ուսանողների գիտելիքներում բացակայում են սոցիալիստական փիլիսոփայական և սոցիալական հայացքների մի քանի հազարամյա պատմությունը և տեսությունը: Մասնավորապես, նրանք տեղյակ չեն, որ սոցիալիստական բարոյականությունը քրիստոնեական բարոյականության աշխարհիկ տարբերակն է:

Ադեկվատ չեն ուսանողների պատկերացումները «Երկրի անվտանգության» պրոֆիլի տեսակետից: Մասնավորապես, **հայ ազգի ֆիզիկական պաշտպանվածության** արդի նշանակալի բարձր գնահատականն, ըստ էության, ժառանգվել է խորհրդային ժամանակաշրջանից, երբ գերտերության՝ ԽՍՀՄ կազմում գտնվելու հետևանքով հայաստանաբնակ հայերի աշխարհընկալումից փաստորեն անհետացել էր Թուրքիայի կողմից վտանգի զգացողությունը, որը դեռևս հարատևում է Հայաստանում ՌԴ ռազմաբազաների առկայության և ՀԱՊԿ անդամության արդյունքում: Էլ ավելի ոչ ադեկվատ է համեմատությունը **ազգային արժեքների պաշտպանվածության** տեսակետից: Ժամանակի հեռավորությունից ակնհայտ է, որ Խորհրդային Հայաստանում աննախադեպ պաշտպանված էր և զարգանում էր ազգային մշակույթը՝ ընդլայնվելով և ներառելով համաշխարհային դասական բարձր մշակույթը, ինչը պայմանավորված էր ԽՍՀՄ և ՀԽՍՀ մշակութային հստակ քաղաքականությամբ՝ դաստիարակել ազգային և համաշխարհային դասական մշակույթը և սոցիալիստական (= հումանիստական, կոլեկտիվիստական, «աշխարհիկ քրիստոնեական») արժեհամակարգը կրող անձ:

Միանգամայն ադեկվատ են ուսանողների պատկերացումներն այն մասին, որ արդի Հայաստանի Հանրապետությունում Խորհրդային Հայաստանի համեմատ ավելի զարգացած են «**Անձի զարգացման հնարավորություններ**» պրոֆիլի բոլոր բաղադրիչները՝ քաղաքական ազատությունները, մասնագիտական և կարիերային աճի հնարավորությունները, հարստանալու հնարավորությունը, ինչպես նաև «Երկրում սոցիալական կարգի» պրոֆիլի՝ **հարգանք եկեղեցու նկատմամբ** բաղադրիչը:

Ստացված արդյունքների առաջին մոտավորությամբ ընդհանրացման դեպքում ՀԽՍՀ և ՀՀ համեմատության 15 բնութագրերից 10-ում (Գծապատկեր 1-ի 1, 2, 5, 6, 7, 8, 10, 11, 12, 13 հարցերը) կամ 67%-ում

ուսանողների հարաբերականորեն ավելի մեծ մասը տվել է ադեկվատ պատասխան:

Խորհրդային Հայաստանի վերաբերյալ տեղեկությունների աղբյուրները. Այս կոնցեպտը գնահատվել է հետևյալ հարցի միջոցով. «Այս քարտում նշված ինֆորմացիայի աղբյուրներից նշեք երեք առավել կարևորները, որոնցով հիմնականում տեղեկություններ եք ստացել Սովետական Հայաստանի մասին» (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2.

Խորհրդային Հայաստանի վերաբերյալ ԵՊՀ ուսանողների ինֆորմացիայի աղբյուրները

«Հետևյալ ինֆորմացիայի աղբյուրներից նշեք երեք առավել կարևորները, որոնցով հիմնականում տեղեկություններ ստացել Սովետական Հայաստանի մասին	1-ին աղբյուր	2-րդ աղբյուր	3-րդ աղբյուր	Ընդամենը նշել են
Ծնողներից	18%	22%	31%	71%
Սովետական շրջանի գեղարվեստական ֆիլմերից	28%	10%	12%	50%
Դպրոցից	14%	21%	11%	46%
Գրքերից	8%	19%	8%	35%
Հեռուստատեսային հաղորդումներից	15%	6%	12%	33%
Ինտերնետից	11%	12%	10%	33%
Այլ մեկնաբանից	2%	4%	11%	17%
Համալսարանից	4%	6%	4%	14%
Այլ աղբյուր	0%	0%	2%	2%
Ընդամենը	100%	100%	100%	-

ՀԽՍՀ-ի մասին ուսանողների առավել տարածված տեղեկությունների աղբյուրը նրանց ծնողներն են՝ նրանց երեք հնարավոր պատասխանների շարքում նշել է ուսանողների 71%-ը: Վիճակագրական հավաստիության սահմաններում երկրորդ տեղում են խորհրդային շրջանի ֆիլմերը (երեք հնարավորից նշել է ուսանողների 50%-ը) և դպրոցը (46%): Դրանց հետևում են գրքերը, հեռուստատեսային հաղորդումները և ինտերնետը: Հատկանշական է, որ համալսարանը՝ բացահայտորեն նշված ինֆորմացիայի աղբյուրների շրջանում, զբաղեցրել է վերջին տեղը (14%):

Հարկ է ուշադրություն դարձնել, որ խորհրդային շրջանի ֆիլմերը՝ որպես Խորհրդային Հայաստանի մասին ինֆորմացիայի 1-ին աղբյուր, ամենատարածվածն են (28%): Հաշվի առնելով, որ ներկայում խորհրդային շրջանի ֆիլմերից առավելապես հեռարձակվում են 1970-1980-ականների ֆիլմերը, որոնք ներկայացնում են Խորհրդային Հայաստանը «լճացման փուլում», որոնք գեղարվեստական մեծ ուժով արտահայտում են այդ ճգ-

նաժամային փուլի համակարգային և սոցիալական արատները, ապա այդ ֆիլմերի ազդեցությունը երիտասարդների աշխարհայացքի վրա, պետք է ենթադրել, ամբիվալենտ է և արժանի հատուկ ուսումնասիրության:

Եզրակացություններ

Ուսանող երիտասարդության շրջանում, շնորհիվ նրանց ծնողների և դպրոցի, **պահպանվել են Խորհրդային Հայաստանի վերաբերյալ բավարար ադեկվատ պատկերացումներ**: Այնուամենայնիվ, նրանց աշխարհայացքում խաթարված են խորհրդային շրջանում Հայաստանի մշակույթի, գիտության, ֆիզիկական պաշտպանվածության, ազգային արժեքների պաշտպանության և համամարդկային իդեալների ձգտման մասին պատկերացումները:

Խորհրդային Հայաստանի և խորհրդային ժամանակաշրջանի վերաբերյալ նշված ոչ ադեկվատ պատկերացումները նվազեցնում են Հայաստանի ապագա վերնախավերի շրջանում երկրի զարգացման ուղիների, մոտեցումների և մեթոդների շրջանակը, մասնավորապես՝ այն գործոնների ընկալումը, որոնք նպաստել են Խորհրդային Հայաստանի աննախադեպ արագ արդյունաբերական, գիտական և մշակութային զարգացմանը, ինչպես նաև ֆիզիկական և մշակութային պաշտպանվածությանը:

Հաշվի առնելով, որ ուսանողների շրջանում պատմական ադեկվատ հիշողության ձևավորման հարցում համալսարանն ունի իր կարգավիճակին և հեղինակությանն անհամապատասխան փոքր նշանակություն, անհրաժեշտ է քննական վերլուծության ենթարկել համալսարաններում Հայոց պատմության խորհրդային շրջանի ներկայացվածության և մեկնաբանությունների խնդիրները: Մասնավորապես, պարտադիր են դրանց ներկայացումն ու մեկնաբանությունները համաշխարհային պատմության համատեքստում:

Գրականություն

1. Схема развития и размещения производительных сил Армянской ССР на период до 2005 года. Часть I. Госплан Армянской ССР НИИ Экономики и Планирования, Ереван, 1988, с. 227-251:
2. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հուլիսին. Տեղեկատվական ամսական զեկույց: Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2017, էջ 204-209:
3. *Մանուկյան Ս.Ա.,* Հայաստանում երիտասարդական շարժումների զարգացումների շուրջ / 21-րդ ԴԱՐ, N5 (63), 2015, էջ 41-52:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ (ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ) ԱՇԽԱՐՀԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԹԱՔՆՎԱԾ ՀՆԱՐՔՆԵՐԸ

Արմեն Ղալեչյան *

Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ վիրտուալ իրականությունն է «թելադրում» օբյեկտիվ իրականության ընթացքը: Կյանքն, իհարկե, իրական է, սակայն նրա մի զգալի մասը մենք ապրում ենք վիրտուալ (տեղեկատվական արհեստածին) աշխարհում[1]: Առավել ուժգին դեպի իրեն է ձգում վիրտուալը, քան իրականը, քանի որ այն ստեղծված է մեր ուղեղի չափորոշիչներով, որպեսզի բավարարի նրա բոլոր ցանկությունները[2]: Մարդն իր բնույթով սոցիալական էակ է, և նրա կարևոր պահանջմունքներից են ընդունված լինելու, ինքնարտահայտման, ինքնադրսևորման և ինքնահաստատման պահանջմունքները: Բացի այդ, մարդու գերնպատակը երջանկության ձգտումն է, և նա մշտապես պահանջ ունի պոզիտիվ հույզերի, դրայվի, ապագայի նկատմամբ դրական տեսլականի: Ուստի, համացանցային իրողությունը կառուցվում է՝ հաշվի առնելով մարդու նմանատիպ առանձնահատկությունները, օրինակ՝ ֆեյսբուքյան լայքերը բավարարում են գնահատված, ընդունված լինելու պահանջը, սեփական անձի կարևորության զգացումը՝ տալով գերառատ դրական հույզեր, ինչն իրական կյանքում նման քանակությամբ և ուժգնությամբ մարդը չի կարող ստանալ: Օգտատերերի կարծիքները, նկարները և ուղիղ եթերները նպաստում են ինքնարտահայտման պահանջմունքի, իսկ համընդհանուր քննարկումները, սեփական կարծիքը տարածելը, համախոհներ ձեռք բե-

---

* Գնդապետ, ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի անվան Ռազմական համալսարանի հրամանատարաշտաբային ֆակուլտետի ռազմարվեստի ամբիոնի *(տեղեկատվական պայքար առարկայի)* ավագ դասախոս:

[1] *Սամվել Մանուկյան,* Ինտերնետը և սոցիալական ցանցերը Հայաստանում 2012-2016թթ., «Գլոբուս», թիվ 2 (91), 2018թ:

[2] Օրինակ՝ մարդկանց 43%-ը սմարթֆոններին է նայում արթնանալուց անմիջապես հինգ րոպե հետո: Օգտատերերի 10%-ն օրական 5427 անգամ դիմում է սմարթֆոնների «օգնությանը»: Միջին օգտատերն օրական 2617 անգամ փորձում է համացանցի օգնությամբ տեսնել ինչ-որ նոր բան:

րելը՝ ինքնահաստատման պահանջմունքի բավարարմանը: Կարևոր է նշել նաև, որ համացանցային տեղեկատվության հուզական սրությունը, օպերատիվությունն ու ակտուալությունն ապահովում են դրայվային զգացումներ, իսկ համացանցային հավելվածները՝ սիրած գույնի, կենդանու նմանության կամ արտաքին տեսքի փոփոխման և այլնի վերաբերյալ՝ տալիս են երջանկության կեղծ պատրանքներ[3]: Ակնհայտ է, որ վիրտուալը միշտ ավելի ուժեղ է լինելու, քան իրականը, քանի որ վիրտուալի ստեղծումը և սփռումը բավական էժան են: Այն միշտ կարող է հաջողությամբ լուծել նույն խնդիրները, ինչ իրականը: Այդ վիրտուալ աշխարհը կառուցված է այնպես, որպեսզի ստիպի մեզ մոռանալ առկա հոգսերը, խնդիրներն ու մտորումները: Այսօր իրական աշխարհում առկա է այն ամենը, ինչը կա մեր գլուխներում, հետևաբար՝ վիրտուալ աշխարհում մարդկանց ցանկալի ծրագրավորումը թաքնված է ժամանցի շրջանակներում: Ժամանցի շրջանակներում կառուցվում է խայտաբղետ (գունագեղ) վիրտուալ աշխարհ, որը, բնականաբար, մեզ «հավաքագրելով», կանխագծում է ապագան[4]: Այսինքն՝ վիրտուալ իրողության մեջ ձևավորված մտապատկերները, համացանցային հիշողությունները, դիրքորոշումները, ֆեյք արժեքները մարդը տեղափոխում է իրական կյանք և ձգտում, որ դրանք դառնան իրողություն: *Փաստացի, սեփական երկրի և ժողովրդի համար կազմակերպվում են նման գրավիչ, դրայվային վիրտուալ «ճշմարտություններ», և այդ ամենը փաթեթավորվում է շատ գեղեցիկ բառով՝ քաղաքականությամբ: Անշուշտ, այդտեղ երիտասարդությունն առանձնահատուկ (կարևոր) թիրախային լսարան է, որն ի վիճակի է հասարակություն ներմուծել անհրաժեշտ գաղափարներ՝ հաշվի առնելով, որ երիտասարդներն ավելի հուզական են, հեշտ են համոզվում և չունեն անցյալի գաղափարներից կոշտ կախվածություն, նորը հնի հետ համեմատելու հնարավորություն: Ամենակարևորն այն է, որ երիտասարդները չունեն այն վախի մթնոլորտը, բացասական փորձը, որը հավաքված է ավագ սերնդի մեջ, և նրանք պատրաստ են մաքառումների և հաղթանակների:* ***Հնարավոր է, որ հենց այստեղ էլ թաքնված է ժամանակակից աշխարհի ղեկավարման հիմնաքարը:***

[3] *Ս.Անտոնյան,* Ֆեյսբուք. կախվածությունն ու հետևանքները, «Առավոտ» օրաթերթ, 28.03.2018:

[4] Օրինակ՝ սիթքոմները *(Ֆուլ հաուս, Չենջ և այլն: Առանձնահատուկ ձեր ուշադրությունն եմ հրավիրում դրանց անվանումներին),* «ինտելեկտուալ» հեռուստա- և համացանցային խաղերը՝ «աջարաբեթ», «բլոտ» կամ «օդից փող» և այլն:

Այսօրյա ժամանակակից քաղաքականությունն աշխատում է մարդկային երկու հիմնական զգացմունքների վրա՝ սիրո[5] և ատելության[6], դրանց հենվելով հավասարաչափ մակարդակով: Այդ քաղաքականությունն իր ստեղծած վիրտուալ աշխարհով պետք է լուծի ոչ միայն պատերազմի կամ խաղաղության խնդիրները, ոչ միայն սովորեցնի ճիշտ պահվածք[7], այլ նաև փոխհատուցի կյանքում հանդիպող ամեն մի բացասականն այն դրականով, որը կառուցվում է պետության և ամբողջ մարդկության համար: Արդյունքում՝ ամբողջ աշխարհում մեդիան փոխարինել է իրականությանը: Օրինակ՝ կինոն ստեղծում է սոցիալական հիշողություն, որը հետագայում մեր գլուխներում տպավորվում է որպես իրականություն: Չնայած ողջ աշխարհում կինոարտադրության ոլորտի չափազանց պրիմիտիվությանը[8]՝ ԱՄՆ-ը այսօր իր «արտադրանքի» գրավչությամբ, հատկապես ողջ աշխարհի երիտասարդության շրջանում որպես իրեն հավասարը (նմանը) չունեցող, տարածում է «իրական» երազանքներ և օգտվում դրա *սինթետիկ արդյունքից*: Իզուր չէ, որ Հոլիվուդն անվանում են ողջ աշխարհի երազանքների նախարարություն: Զ.Բժեզինսկու կարծիքով, ԱՄՆ կինոարտադրությունը (ռազմական, տնտեսական, գիտական և այլ հզորությունների հետ մեկտեղ), ի տարբերություն երկրագնդի մյուս երկրների, Միացյալ Նահանգների համար *ապահովում է հստակ տեղեկատվական և քաղաքական ներազդեցություն*, որի հետ աշխարհի ոչ մի պետություն չի կարող համեմատվել[9]: *Հենց երազանքը (պատրանքը), այլ ոչ թե իրականությունն է մարդկանց դարձնում երջանիկ:*

Վիրտուալը ակտիվ աշխատում է մեր պատրանքների հետ: Մի կողմից՝ ստեղծարարությունը և ինովացիաները, մյուս կողմից՝ անշուշտ, «անարյուն» հեղափոխություններն են հանդիսանում հենց պատրանքների

[5] Օրինակ՝ թավշյա հեղափոխության հանրահավաքներից հետո տարածքի մաքրությամբ զբաղվելը, միմյանց մասին հոգ տանելը և այլն:

[6] Օրինակ՝ հայաստանյան ձայնեղ ձերբակալությունների (ԱԱԾ կամ ոստիկանության) տեղեկատվության վերաբերյալ համացանցում մարդկանց (մեծ մասի) հրճվանքն ու ոչ ադեկվատ մեկնաբանությունները:

[7] Օրինակ՝ բրիտանացիներն իրենց կողմից գաղութացված երկրներին արհեստականորեն «պարտադրում» էին իրենց պահելաձևը (հագուստի կրման և սնվելու կուլտուրան և այլն), որը մինչ այդ տեղացի բնակչությանը հարիր չէր: Ընդհանրապես, Միացյալ Թագավորությունը բավական երկար ժամանակ այլ երկրների համար «օրինակելի» պետություն էր հանդիսանում:

[8] Օրինակ՝ հնդկական, թուրքական, բրազիլական, ռուսական հեռուստասերիալները:

[9] Օրինակ՝ ԱՄՆ ռազմական հզորությանը և գերակայությանը վերաբերող այնպիսի ֆիլմեր, ինչպիսիք են «Ռեմբոն», «Տերմինատորը», «Կարմիր տապը» և այլն:

աշխատանքի հետևանք: Ամեն մարդ, իհարկե, սեփական իրականության իրավունք ունի, դա պետք է հանդիսանա անհատի կարևորագույն իրավունքը, որն այս կամ այն կերպ խախտվում է բոլոր պետությունների կողմից: Մասնավորապես՝ միգուցե մարդկանց կարելի է աշխատավարձ քիչ վճարել, բայց պետություններն իրավունք չունեն հաճախակի հաճոյախոսել (խաբել), թե նրանք ամենաապահովված մարդկանցից են այդ երկրներում (և աշխատավարձերը շուտով կրկնակի բարձրացվելու են): Մարդիկ ուղղակի մի կողմ են դնում (նետում) և անտեսում այն տեղեկատվությունը, որը հակասում է իրենց պատկերացումներին և, ընդհակառակը՝ առավել ինտենսիվ կենտրոնանում և յուրացնում են այն տեղեկույթը, որը հաստատում է սեփական սպասումները: Մարդիկ սպասում են իրենց գործողությունների և պատկերացումների ճշմարտացիության հաստատումներին: Դա է պատճառը, որ լայն զանգվածների կարծիքը մեզ համար դարձել է ավելի դոմինանտ, քան գիտելիքի և սեփական վերլուծության վրա հիմնված փաստը: Կարծիքը միշտ ավելի մոտ է անձնական և զանգվածային գիտակցությանը, քան փաստը: Փաստը կարող է գրգռել իր անհամապատասխանությամբ, սակայն կարծիքն արտահայտում է այն ամենը, ինչը տվյալ պահին գիտակցությունը համարում է ճիշտ և հաճելի: Կարծիքի դերի բարձրացման մեկ այլ պատճառ կարող է հանդիսանալ այն, որ մենք այսօր ունենք բավական բևեռացված հասարակություն, որտեղ ամեն մի անհատ իր կարծիքը համարում է ճիշտ և չի ընդունում, որ մեկ ուրիշի կարծիքը կարող է ճիշտ լինել[10]: Այսօր տարօրինակ ձևով չենք ուզում համաձայնել ուրիշների կարծիքների հետ՝ պնդելով միայն մեր ճշմարտացիությունը: Մենք ունակ չենք բանավիճելու, միայն կարող ենք միմյանց մեղադրել կամ գովաբանել: Դա հանգել է նրան, որ մեր շրջապատից փաստացի անհետացել են հասարակության համար շատ կարևոր ինտելեկտուալ հեղինակությունները *(որոնց տեղը, մեր կարծիքով, լրացրել են «փորձագիտական մեկնաբանություններով» հաճախ փայլող լրագրողները կամ այդ ոլորտին չվերաբերող մարդիկ)*: Որպես հետևանք, այսօր հասարակությունն ընկել է սոցմեդիայի այնպիսի ազդեցության տակ, ինչպիսին ֆեյսբուքն է, որը մեր հույզերը հափշտակել և փոխարինել է սեփա-

[10] Օրինակ՝ վերջերս համացանցում, մասնավորապես՝ Facebook ում ծավալված անհանդուրժողականության (ձայնեղ ձերբակալությունների, նորանշանակ պաշտոնյաների վերաբերյալ քննարկումները) մթնոլորտը, որտեղ մի խումբ «ակտիվիստներ» պնդում էին տեսակետներ՝ դեպքերի վերաբերյալ իրենց մեկնաբանություններով:

կան լայքերի հավաքածուով: Ներկայիս աշխարհը դարձել է ավելի բարդ, քան անցյալի աշխարհը: Այստեղից էլ հայտնվել են լայքերը, ֆեյքերը և իրական աշխարհից այլ բազմազան շեղումներ:

Ոչ վաղ անցյալում պետությունն ու «նրա հավատարիմ» պետական ծառայողները և լրագրողներն ունեցել են համապատասխան իրավասություն, որ սպառողներին տրամադրեն իրենց շահավետ և սահմանված տեղեկատվություն: Ներկայում այդ իրավասությունն այլևս չկա: Հիմա ցանկացած անհատ, լրագրող, մարդկանց խումբ կարող են և՛ ստել, և՛ տրամադրել ճշմարտություն: Փոփոխվել է տեղեկատվության տրման և սպառման կարգը, փոփոխվել է ամեն ինչ: Սոցիալական մեդիայի տեղեկատվական հոսքերը դարձել են առավել հակիրճ ու համառոտ և ավելի շատ համապատասխանում են յուրաքանչյուրի անհատական պահանջմունքին: Անցյալի «ինդուստրիալ» հոսքերն[11] իրենց օգտակարությունը պահպանում են մեծ դժվարությամբ, վերջինիս պատճառներից է, օրինակ, շատերի կողմից ակտիվ կիրառվող *«փնթի copy, paste»*-ը: Մենք ցանկանում ենք ապրել մեր սեփական ենթադրություններում, ինչն առավել հաճելի է մեզ: Մեզ սկսել են քիչ հետաքրքրել այլոց մտքերը, մասնավորապես, եթե դրանք տարբերվում են մերինից:

Ժամանակակից հասարակարգը բնութագրվում է մի քանի հիմնարար հատկություններով, որոնք չեն եղել անցյալում: Դրանցից է, օրինակ, համացանցային սոցմեդիայի մեծաքանակ մասնակիցների առկայությունը, որում առկա են տարբեր ոլորտների և մասնագիտությունների տեր մարդիկ, մասնավորապես՝ ուսանողներ, բլոգերներ, գործարարներ, գիտնականներ, պետական ծառայողներ, այդ թվում՝ *բանակը՝ համալրող ամենատարբեր ժամկետային և պայմանագրային զինծառայողներով, սպայակազմով՝ նրանց ընտանիքների անդամներով: Բանակի հիմքը կազմող մարդկային ռեսուրսները գտնվում են այդ* ***հստակ քաղաքական ներազդեցության*** *տակ (տեղեկատվական հոսքերի հորձանուտում) և անհամեմատ ավելի խոցելի են*: Քանի որ երկրի անվտանգության ապահովման հարցերի համար առաջին պատասխանատուն բանակն է՝ իր մարդկային ռեսուրսներով, հետևաբար՝ սոցմեդիայի մեծաքանակ մասնակից-

[11] Օրինակ՝ մեզ բոլորիս հայտնի, իրականությունից կտրված և իրենց ժամանակից հետ մնացած լրատվությունով հայրենական ԶԼՄ-ն, այլ երկրներից «պատճենված» հեռուստահաղորդումները և այլն:

ների շփումների բարձր հաճախականությունը, միջանձնային կոնտակտները, մտքերի բազմաքանակ փոխանակումները և դրանց օպերատիվությունը, համացանցի և մեդիայի օգնությամբ այդ ոլորտին վերաբերող ցանկացած տեղեկույթի և տեղեկատվության բազմաթիվ շահարկումները, ոչ միշտ, բայց ժամանակ առ ժամանակ բերում են ոչ ցանկալի, հուսախաբ, քաոսային, ոչ ադեկվատ վիճակների:

Վաղվա աշխարհն *իր ղեկավարման թաքնված մոդելներով* արդեն կանգնած է բոլորիս դռան շեմին, իսկ որոշ երկրներում այն արդեն իրականություն է: Զարգացող երկրներում վիրտուալ (տեղեկատվական) հնարքները նման փոփոխությունները (գիտատեխնիկական, սոցիալ-հասարակական և այլն) կարող են արագացնել, իսկ անտեսման դեպքում՝ հետաձգել: Այդ ոլորտում առաջատար երկիրն անլուրջ կվերաբերվի հետամնաց երկրին, քանի որ այն արդեն այլ մակարդակի աշխարհում է և նրան այդքան էլ չեն հետաքրքրում հին աշխարհի առանձին կտորտանքները: Որպես հետևանք, մենք բոլորս դառնում ենք առաջատար երկրների կողմից իրականացվող տեղեկատվական մանիպուլյացիաների և փորձարկումների օբյեկտ՝ կառավարվելով նրանց իսկ կողմից կիրառվող *ժամանակակից (տեղեկատվական) աշխարհի ղեկավարման թաքնված հնարքներով*:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՈՐՈՇ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Կարեն Վերանյան՝

Հարավային Կովկասը և մերձտարածաշրջանն առաջիկայում գտնվելու է ամերիկյան տնտեսական ճնշումների ներքո: Վաշինգտոնը ահմանում է տնտեսական փուլային պատժամիջոցներ Իրանի և Ռուսաստանի նկատմամբ, ամերիկացի հոգևորականի գործով տնտեսական անկայունության փուլ է մտնում Թուրքիան, այս ամենի տնտեսական հետևանքները տրամաբանորեն չեն շրջանցի նաև հարավկովկասյան երկրները: Կարելի է կանխատեսել, որ տարածաշրջանի ուղղությամբ տնտեսական ճնշումները կմոբիլիզացնեն հակահիսրայելական հասարակական-քաղաքական բևեռը, լարվածությունը կմեծանա պաղեստինա-իսրայելական ճակատում, նոր խմորումներ կլինեն Սիրիայում:

Հակաքայլեր ԱՄՆ պատժամիջոցների համատեքստում

Իրան-Սիրիա ռազմական համաձայնագիր

Օգոստոսի վերջին պաշտոնական այցով Սիրիայում էր Իրանի պաշտպանության նախարար Ամիր Հաթամին: Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել խորացնելու համագործակցությունն ահաբեկչության դեմ պայքարում, պաշտպանական ոլորտում: Իրանական կողմը պատրաստակամություն է հայտնել աջակցել Սիրիային նաև սպառազինությունների մշակումների հարցում:

Իրանի պաշտպանության նախարարի այցը Սիրիա խորհրդանշական է հետևյալ իմաստով. նախ՝ Թեհրանն այս այցով ձգտում է շեշտադրել, որ չնայած ամերիկյան սահմանափակումներին և Իրանի տնտեսության վրա դրա հնարավոր շոշափելի բացասական հետևանքներին՝ Իրա-

---

* «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

նը տիրապետում է դրանց դիմագրավմանն անհրաժեշտ մեխանիզմների և շարունակելու է պահպանել իր ռազմական, ռազմաքաղաքական ներկայությունն ու դիրքերը Սիրիայում և Մերձավոր Արևելքում, չի պատրաստվում ընկրկել Իսրայելի և ԱՄՆ ճնշումների ներքո: Երկրորդ՝ իրանական կողմը վերահաստատում է իր դիրքորոշումը՝ պահպանել Սիրիայում ՌԴ-ի և Թուրքիայի հետ համատեղ հակաահաբեկչական պայքարի եռակողմ ձևաչափը: Այդ համատեքստում զուգադիպություն չէր, որ Իրանն օգոստոսի 21-ին Թեհրանում կայացած ավիացուցահանդեսի ժամանակ ներկայացրեց սեփական արտադրության առաջին կործանիչը՝ «Քովսար»-ը: Իսկ սեպտեմբերի սկզբին իրանական կողմը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ, որ երկիրը մտադիր է հարստացնել սեփական հրթիռային ներուժը, ինչպես նաև մեծացնել կործանիչների և սուզանավերի թիվը:

Մոսկվան և Անկարան մոբիլիզացնում են ռեսուրսները

Խորհրդանշական էր նաև օգոստոսի կեսին կայացած Լավրով-Չավուշօղլու հանդիպումը, որի առանցքային թեման ամերիկյան պատժամիջոցներն են և դրանց հակազդման հնարավոր համատեղ քայլերը: Ռուսաստանը և Թուրքիան կձգտեն ռազմաքաղաքական հարթությունում զսպել ամերիկյան ազդեցությունը Սիրիայում ու Մերձավոր Արևելքում, այդ տրամաբանությունը կանդրադառնա նաև հարավկովկասյան տարածաշրջանում ընթացիկ զարգացումների վրա: Երկկողմ բանակցային կարևոր հարցերից մեկը կշարունակի մնալ համատեղ տնտեսական հակաքայլերի մշակման բլոկը:

Ուստի, կարելի է ենթադրել, որ առաջիկայում նման երկկողմ, եռակողմ՝ Իրանի մասնակցությամբ, հանդիպումների կազմակերպման անհրաժեշտությունն ավելի քան պահանջված կլինի նշյալ պետությունների համար: Հիշեցնենք, որ օգոստոսի 10-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կարգադրել է 2 անգամ բարձրացնել թուրքական ալյումինի և պողպատի մաքսատուրքերը, որ դրանք կազմեն համապատասխանաբար 20% և 50%:

Այդ առումով առանձնահատուկ կարևորություն պետք է տալ Իրանի ԱԳ նախարար Մոհամադ Զավադ Զարիֆի հայտարարությանը: Նա դատապարտել էր Թուրքիայի նկատմամբ ԱՄՆ պատժիչ տնտեսական գործողությունները: Նրա բնորոշմամբ, «ՆԱՏՕ գծով իր դաշնակից Թուր-

քիային տնտեսական վնաս պատճառելու ցնծությունը ամոթալի է: ԱՄՆ-ը պետք է հրաժարվի պատժամիջոցների և հալածման հակվածությունից, հակառակ դեպքում ամբողջ աշխարհը կհամախմբվի, որ ստիպի նրան դա անել, և խոսքը միայն բանավոր հանդիմանության մասին չէ: Մենք մեր հարևանների կողքին ենք կանգնել անցյալում, կկանգնենք նաև հիմա»:

Ռուսական կողմն իր հերթին քայլեր է ձեռնարկում զսպելու և դիմակայելու ամերիկյան սահմանափակումներին՝ ներքին և արտաքին դաշտում: Վերջինի համար կարևոր ձեռքբերում էր այն, որ վերջերս Մոսկվան Սաուդյան Արաբիայի հետ եկավ համաձայնության՝ կոորդինացնելու համաշխարհային շուկայում էներգակիրների արդյունահանման ծավալների և դրանց գների կայունացման հարցերը:

ԵՄ դիրքորոշումը

Իրանի և Ռուսաստանի նկատմամբ ամերիկյան պատժամիջոցները միանշանակ չեն ընկալվում նաև ԵՄ-ում: ԵՄ-ը փորձում է հնարավորինս ինքնուրույն քաղաքականություն վարել Իրանի հարցում և ուղղակիորեն չհետևել ամերիկյան պատժամիջոցների տրամաբանությանը: ԵՄ-ը ճիշտ և պրագմատիկ դիրքորոշում է որդեգրել այդ հարցում և ըստ էության ուղղակիորեն չի սատարում ամերիկյան պատժամիջոցներին, քանի որ դրանից տուժում են մի շարք եվրոպական ընկերություններ, որոնք տնտեսական շահեր ունեն Իրանում:

Հիշեցնենք, որ վերջերս Եվրահանձնաժողովը հավանություն էր տվել €18 մլն օգնության առաջին փաթեթի հատկացմանը՝ Իրանի տնտեսական և սոցիալական զարգացմանն աջակցելու նպատակով: Ի դեպ, սա ԵՄ-ից նախատեսվող ֆինանսական աջակցության առաջին փաթեթն է. ընդհանուր առմամբ ԵՄ-ը նախատեսում է Իրանին տրամադրել €50 մլն: Նշենք, որ Իրանին հատկացվող ֆինանսական աջակցությունն իրականացվում է Իրանի միջուկային ծրագրի շուրջ պայմանագրի շրջանակներում: ԱՄՆ Պետդեպարտամենտում այս քայլը որակվեց որպես «սխալ ազդանշան ոչ հարմար պահին»: Պետդեպարտամենտում վստահ են, որ եվրոպական հարկատուների կողմից Իրանին ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը կամրապնդի Իրանի «ռեժիմի» դիրքերը, ինչպես նաև կճնշի Իրանի արտաքին քաղաքականությունում հնարավոր փոփոխությունները:

Ուշագրավ էր օգոստոսի 27-ին Ֆրանսիայի նախագահ Մակրոնի հայտարարությունը, որի համաձայն՝ Ֆրանսիան ջանքեր է գործադրում եվրոպական պաշտպանական պլանի զարգացման հարցում: Նա նաև նշել է, որ եվրոպական պաշտպանության ու անվտանգության ապահովման հարցերում Եվրոպան չպետք է այդքան շատ հույսեր կապի և վստահություն ունենա Միացյալ Նահանգների հանդեպ: Մակրոնի խոսքերով, «եվրոպական երկրները պետք է ինքնուրույնաբար զբաղվեն սեփական անվտանգության հարցերով, և դրա համար անհրաժեշտ է ներգրավել նաև Ռուսաստանին»:

Արևմտյան փորձագետների գնահատմամբ, Ռուսաստանի և Իրանի դեմ ամերիկյան պատժամիջոցները կարող են բացասաբար անդրադառնալ նաև այլ երկրների տնտեսությունների վրա: ՌԴ-ի նկատմամբ նախատեսվող տնտեսական սահմանափակումների փաթեթը, որը քննարկվում է ԱՄՆ Կոնգրեսում, կարող է բացասական հետևանքներ թողնել նաև եվրոպական նավթագազային ընկերությունների, ինչպես նաև Միացյալ Նահանգներից բարձրտեխնոլոգիական արտադրանքի արտահանումների վրա, ինչն էլ կարող է խոշոր հաշվով հանգեցնել շուկայի քաոսի:

Ավելի վաղ՝ ս.թ. գարնանը, նախագահ Թրամփի վարչակազմը պատժամիջոցներ էր սահմանել ռուսաստանյան 38 գործիչների և ընկերությունների նկատմամբ: Նրանց մի հատվածը բարձրաստիճան պաշտոնյաներ են: Այդ ցուցակում են հայտնվել նախագահ Պուտինի մերձավոր շրջապատից՝ օլիգարխ Օլեգ Դերիպասկան և նրան պատկանող 12 ընկերությունները, 17 ռուսաստանցի բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև զինամթերքի վաճառքով զբաղվող ռուսական պետական ընկերություններից մեկը: Պատժամիջոցները կարգելափակեն ռուս օլիգարխների բոլոր այն միջոցները, որոնք գտնվում են ամերիկյան կողմի իրավասության ներքո: ԱՄՆ քաղաքացիներին արգելվում է որևէ գործունեություն ծավալել պատժամիջոցների ենթարկված կառույցների կամ անձանց հետ: Պատժամիջոցները տարածվում են նաև այն ընկերությունների վրա, որոնց բաժնետոմսերի կեսը պատկանում է պատժամիջոցների ենթարկված անձին: Մասնավորապես, բերվում է ռուսաստանցի օլիգարխ Օլեգ Դերիպասկայի և նրա ալյումինի արտադրության ընկերության նկատմամբ ԱՄՆ ֆինանսների նախարարության կոշտ պատժամիջոցների նախաձեռնման օրինակը, ինչի հետևանքով արևմտյան հաճա-

խորդները դադարեցին գնել վերջինիս հսկողության ներքո գտնվող արտադրանքը՝ դրանով իսկ զգալի վնաս հասցնելով բաժնետոմսերի գների հետ կապված: Արդյունքում՝ ալյումինի համաշխարհային գներն աճեցին՝ չշրջանցելով ամերիկյան և եվրոպական ընկերությունները:

Կասպից ծովի իրավական կարգավիճակը սահմանող համաձայնագիր

Տարածաշրջանային կարևոր իրադարձություններից մեկը կասպյան համաձայնագիրն էր: Օգոստոսի 12-ին կասպյան 5 երկրները երկարատև բանակցություններից հետո վերջապես համաձայնության եկան Կասպից ծովի ընդերքի և բնական պաշարների օգտագործման, ինչպես և դրա մակերեսի բաշխման հարցերում: Նշենք, որ Կասպից ծովի իրավական կարգավիճակը սահմանող համաձայնագրի ստորագրման հարցում նշյալ 5 պետություններից, թերևս, ամենաշահագրգիռ կողմը Ադրբեջանն էր՝ իր էներգետիկ ռեսուրսների ընդլայնման հնարավորությունների ակնկալիքով: Այս տեսանկյունից ստորագրված հռչակագիրը Թուրքիա-Ադրբեջան-Ղազախստան առանցքի ռազմավարական հաղթանակն էր:

Հավելենք, որ Կասպից ծովի իրավական կարգավիճակի սահմանման հարցը միանշանակ չէր մերձկասպյան երկրների շրջանում, ինչի արդյունքում տարիներ շարունակ կողմերին չէր հաջողվում ընդհանուր հայտարարի գալ կարգավիճակի վերաբերյալ: Հակասությունների պատճառներից էին էներգետիկ ռեսուրսների բաշխման և տնօրինման, տարածքային բաժանման, ինչպես նաև քաղաքական, ռազմաքաղաքական նշանակության հիմնահարցերը:

Եվ այսպես, *Կասպից ծովի իրավական կարգավիճակի մասին հռչակագրով Ադրբեջանն իր համար լուծում է մի քանի ռազմավարական հարց: Նախ, համաձայնագրով հնարավորություն ստանալով վերահսկել կասպյան էներգակիրների անհամեմատ ավելի մեծ ծավալներ՝ դրանց արդյունահանումից ու շահագործումից ստանում է զգալի ֆինանսական կապիտալ կուտակելու հնարավորություն, երկրորդ՝ ամրապնդում է իր դիրքերը՝ որպես տարածաշրջանային էներգետիկ-տրանսպորտային կարևոր հանգույց, երրորդ՝ ուժեղանում է Թուրքիա-Ադրբեջան-Ղազախստան էներգետիկ-ռազմավարական առանցքը: Ըստ էության, այս բոլոր նախադրյալները ավելի մեծ վստահություն են տալիս Ալիևին մեծացնե-*

լու երկրի տարածաշրջանային կշիռը, ինչն, իր հերթին, հնարավորություն է տալիս վերջինիս առավել ամուր դիրքերից հանդես գալ հայ-ադրբեջանական դիմակայությունում և արցախյան հիմնահարցում:

Կասպից ծովի իրավական կարգավիճակը կանոնակարգող հռչակագրի ստորագրման հարցում հայաստանյան փորձագիտական, նաև՝ քաղաքական դաշտում կան մտահոգություններ, և դրանք հիմնավորված են այն առումով, որ Կասպից ծովի իրավական կարգավիճակի ամրագրման հարցում գլխավորապես շահագրգռված էր Ալիևը՝ արդեն հիշատակված օբյեկտիվ պատճառներով: Իսկ սա ենթադրում է, որ մեծանում է Ադրբեջանի հնարավորությունը՝ դառնալու դեպի ԵՄ էներգակիրների արտահանման տարանցիկ և մատակարար հիմնական ուղղություններից մեկը: Խոսքը, նախ, այն մասին է, որ այս համաձայնագրով իրականություն է դառնում Տրանսկասպյան գազամուղի լիակատար կառուցումը, քանի որ դրա իրագործման համար անհրաժեշտ էր կասպյան բոլոր 5 պետությունների համաձայնությունը:

Ավելին, համաձայնագրի ստորագրումն էապես մեծացնում է Ադրբեջանի տնտեսական-հաղորդակցային տարածաշրջանային գրավչությունը չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ռազմավարական նախաձեռնության համար, որի շրջանակներում Չինաստանը նոր ուղիներ և հնարավորություններ է որոնում՝ կամրջելու Միջին Ասիան Եվրոպայի հետ: Համաձայնագրի ստորագրումը, խոշոր հաշվով, մեծ ձեռքբերում է ոչ միայն Ադրբեջանի, այլև թուրք-ադրբեջանական տանդեմի համար, որը ջանք չի խնայում Հայաստանի տնտեսական շրջափակման գործընթացը խորացնելու համար: Դժբախտաբար, սույն համաձայնագրով ևս մեկ էական քայլ արվեց այդ ուղղությամբ:

Ինչ վերաբերում է կասպյան մյուս երկրների շահերին, նշենք, որ Ռուսաստանը և Իրանը համաձայնել են ավելի շատ էներգակիր ռեսուրսներ զիջել Ադրբեջանին: Իսկապես կարևոր հարց է, թե ադրբեջանական կողմին ինչպես հաջողվեց Ռուսաստանի և Իրանի ղեկավարությանը բերել ընդհանուր համաձայնության և, ի վերջո, ստորագրել այդ համաձայնագիրը, քանի որ, ըստ էության, Կասպից ծովի իրավական կարգավիճակի սահմանմամբ ժամանակին, մեղմ ասած, այնքան էլ շահագրգռված չէին Ռուսաստանը և Իրանը: Ըստ ամենայնի, ՌԴ-ի և Իրանի համար առավել կարևոր է եղել ռազմական, ռազմաքաղաքական բաղադրիչը,

այն է՝ չթույլատրել երրորդ երկրի կամ երկրների ռազմական ներկայությունը Կասպից ծովի ավազանում, ինչն առանձին կետով ամրագրված է սույն համաձայնագրում: Հենց այս հարցի շուրջ կողմերի միջև փոխհամաձայնությունն էլ թույլ է տվել գալ ընդհանուր հայտարարի նաև ծովի ընդերքի բաշխման հարցում՝ ըստ էության էներգակիրների վերահսկման ավելի մեծ ծավալներ և հնարավորություններ ընձեռելով Բաքվին:

Մերկելի այցը Հարավային Կովկաս. հիմնական արդյունքները

Անդրադառնանք տարածաշրջանային մեկ այլ կարևոր իրադարձության. թե՛ հայաստանյան, թե՛ օտարերկրյա մեդիա-դաշտում և փորձագիտական շրջանակներում շարունակվում են քննարկումները Գերմանիայի կանցլեր Ա.Մերկելի Հարավային Կովկաս կատարած այցելության շուրջ: Նշենք, որ այցը նախ տարածաշրջանային նշանակություն ուներ, հետո նոր միայն այն դիտարկվում է առանձին վերցրած երկկողմ հարաբերությունների տիրույթում: Տարածաշրջանային առումով Մերկելի այցն ընդգծում է Գերմանիայի առանձնահատուկ շահերի առկայությունը Հարավային Կովկասում: Հարցը դիտարկելի է աշխարհաքաղաքական իրողությունների, մասնավորապես՝ ԱՄՆ-Գերմանիա, ՌԴ-Գերմանիա հարաբերությունների համատեքստում: Դժվար չէ նկատել, որ Թուրքիայի, ՌԴ-ի և Իրանի հանդեպ ամերիկյան պատժամիջոցները միանշանակ ընկալում չունեն ԵՄ-ում, և սա լավ հնարավորություն է այս այցով շեշտադրելու տարածաշրջանի կարևորությունը Գերմանիայի համար: Այս տեսանկյունից, այց է կատարվում մի տարածաշրջան, որտեղ ուղղակի շահեր ունեն ՌԴ-ն, Թուրքիան և Իրանը:

Կանցլերի այցից սպասելիքները տարբեր են երեք երկրներում էլ՝ ելնելով վերջիններիս, ինչպես և Գերմանիայի քաղաքական առաջնահերթություններից: Երկկողմ հարաբերությունների մասով, թերևս, առավել շահեկան դիրքում հայտնվեց Վրաստանը՝ ստորագրելով շուրջ $200 մլն-ի համաձայնագիր: Ինչ վերաբերում է Ադրբեջանին և Մերկելի այցից այդ երկրի իշխանությունների սպասելիքներին, ապա առանձնացնենք երկու հիմնական ուղղություն. առաջին՝ Գերմանիայի համար Ադրբեջանը կարևոր է որպես էներգետիկ տրանսպորտային միջանցք, որը կարող է թուլացնել Եվրոպայի կախվածությունը ռուսական գազից: Հարցն իրապես

ակտուալացել է կասպյան համաձայնագրի ստորագրումից հետո, ինչի արդյունքում Ադրբեջանն անհամեմատ մեծ հնարավորություններ է ստանում օգտվելու Կասպից ծովի ընդերքից և էլ ավելի ընդգծելու իր դերը որպես տարածաշրջանի էներգետիկ կարևոր հանգույցներից մեկը: Երկրորդը վերաբերում է արցախյան հիմնախնդրին, որին Ադրբեջանը մշտապես ձգտում է տալ միջազգային հնչեղություն: Այս տեսանկյունից, թեև Գերմանիան ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ է, և Մերկելը հայտարարեց, որ իր երկիրը կարող է վերցնել արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում ավելի լայն պատասխանատվություն, այդուհանդերձ, նշենք, որ ներկայում, թերևս, չկան հիմնախնդրում Գերմանիայի ներգրավման խորացման նպաստավոր նախադրյալներ:

Ա.Մերկելի Հայաստան այցով Գերմանիան վերահաստատեց իր պատրաստակամությունը՝ աջակցել ՀՀ-ին ԵՄ-ի հետ շրջանակային համաձայնագիրը կատարելու հարցում, ինչը, պետք է խոստովանել, ավելի շուտ դեկլարատիվ և արարողակարգային բնույթ ուներ, քան կիրառական նշանակություն, քանի որ այդ հարցում գնդակը, ըստ էության, հայկական դաշտում է: Հայաստանը կարևորվում է Գերմանիայի կողմից նաև որպես հետխորհրդային տարածքում բացառիկ երկիր, որը կարողացել է համադրել ԵԱՏՄ և ԵՄ համագործակցային ձևաչափերը, ինչի մասին խոսվեց նաև Երևան Մերկելի այցելության ընթացքում:

Հետևություններ

Հարավկովկասյան գործընթացները զարգանալու են տարածաշրջանային առանցքային տերությունների՝ Իրանի, ՌԴ-ի և Թուրքիայի նկատմամբ ամերիկյան տնտեսական սահմանափակումների տրամաբանության ներքո: Նման իրադրության հետևանքներից, անշուշտ, կարճաժամկետ, միգուցե՝ միջնաժամկետ տեսլականում, թերևս, չեն խուսափի հարավկովկասյան երկրները: Առավել խնդրահարույց է հատկապես Հայաստանի վիճակը, որը, երկու հարևանների կողմից գտնվելով շրջափակման մեջ, կունենա նաև առևտրային ու կոմունիկացիոն խնդիրներ մյուս՝ իրանական ուղղությամբ: Այս ամենի համատեքստում, մեղմ ասած, ամենևին «սպասված» չէր Վրաստանի ղեկավարության որոշումը, ըստ որի՝ ս.թ. սեպտեմբերի 15-ից ՌԴ-ից Վրաստանի տարածքով դեպի ՀՀ ցորենի ցամաքային ներկրման վրա արգելք է սահմանվում: Բարեբախտաբար,

հարցը առժամանակ կարգավորվեց «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության որոշումից հետո, որով 2018թ. սեպտեմբերի 1-ից Փոթի նավահանգիստ–ՀՀ հաղորդակցությունում հացահատիկային բեռների երկաթուղային փոխադրումների սակագները նվազում են 52%-ով, ինչի արդյունքում հնարավոր կլինի խուսափել ցորենի թանկացումից:

Նշենք, որ Վաշինգտոնի կողմից Իրանի նկատմամբ պատժամիջոցների սահմանումը բացասաբար կանդրադառնա հայ-իրանական առևտրաշրջանառության վրա, հարցականի տակ կարող է դրվել նաև Մեղրիի ազատ տնտեսական գոտու հետագա զարգացման հարցը: Պատժամիջոցները տարածվում են ոչ միայն իրանական կազմակերպությունների վրա, դրանցից կտուժեն այն բոլոր արտերկրյա ընկերությունները, որոնք գործակցում են Իրանի հետ: ՀՀ տնտեսության վրա կազդեն նաև ռուսական ռուբլու տատանումները, կկրճատվեն ՌԴ-ից Հայաստան տրանսֆերտների ծավալները:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՂԱԶԱԽՍՏԱՆՈՒՄ. ՌԻՍԿԵՐ ԵՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Անդրանիկ Հովհաննիսյան[*]

Ղազախստանի Հանրապետությունում շարունակվում են երկրի Սահմանադրության փոփոխությունների ակտիվ քննարկումները: 1991թ. սկսած՝ Կենտրոնական Ասիայի երիտասարդ հանրապետությունում ընդունված է նախագահական կառավարման մոդել: Սակայն վերջին տարիներին Սահմանադրության աստիճանական փոփոխությունները վկայում են այն մասին, որ հնարավոր է՝ պետությունը վերափոխվի խորհրդարանական համակարգի: 2017թ. իր հարցազրույցներից մեկում նախագահի, կառավարության և խորհրդարանի միջև իշխանության վերաբաշխման վերաբերյալ խոսեց նաև ՂՀ նախագահ Նուրսուլթան Նազարբաևը[1], ինչը վկայում է երկրում խորհրդարանական կառավարման մոդելի աստիճանական և փափուկ անցումային շրջանի մասին:

Գործող Սահմանադրության համաձայն, Ղազախստանում ընդունված է նախագահական կառավարման մոդել (հոդված 2, մաս 1): Այնուամենայնիվ, դե ֆակտո Սահմանադրության բովանդակության, մասնավորապես պետական մարմինների համակարգի բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ Ղազախստանի Հանրապետության կառավարման ընդունված կարգը ոչ թե նախագահական է, այլ կիսանախագահական: Ինչպես հայտնի է, դասական նախագահական հանրապետություններում խորհրդարանի հանդեպ կառավարության քաղաքական պատասխանատվության ինստիտուտ չկա: Բացի այդ, երկրի նախագահն իրավունք չունի լուծարել խորհրդարանը: Սակայն Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ խորհրդարանը հնարավորություն ունի (թեև կտրված) անվստահության վոտում հայտնել կառա-

[*] «Նորավանք» ԳԿՀ փորձագետ:

[1] *Поделиться властью: какие полномочия Назарбаев готов отдать Кабмину,* https://ru.sputniknews.kz/politics/20170124/1441141/podelitsya-s-vlastyu-kakie-polnomochiya-nazarbaev-gotov-otdat-kabminu.html, 24.01.2017

վարությանը (53-րդ հոդված, 6-րդ և 7-րդ կետեր)։ Ավելին, նախագահն իրավունք ունի լուծարել խորհրդարանը (հոդված 63)։

Ակնհայտ է, որ նախագահ (ղազ.՝ «Էլբասը») Ն.Նազարբաևի հեղինակությունը շատ բարձր է Ղազախստանում, վերջին երեք տասնամյակների ընթացքում նա չափազանց կարևոր դեր ունի հանրապետության քաղաքական վերնախավում՝ ստանձնելով երկրի առաջնորդի դերը։ Անկասկած, նա վայելում է ղազախստանցիների բացարձակ մեծամասնության աջակցությունը։ 1991թ. ի վեր Ն.Նազարբաևը Ղազախստանի Հանրապետության անփոփոխ առաջնորդն է։ Փաստերը վկայում են, որ «Էլբասըն», ունենալով միլիոնավոր ղազախստանցիների աջակցությունն ու վստահությունը, հստակ ծրագրեր է առաջադրում և աստիճանաբար իրականացնում դրանք։ 2016թ. ապրիլին Ղազախստանում տեղի ունեցան արտահերթ նախագահական ընտրություններ, որոնք նախաձեռնել էին «Ղազախստանի ժողովրդի ժողովի» (*The Assembly of People of Kazakhstan*) պատվիրակները։ Ըստ պաշտոնական տվյալների, Ն.Նազարբաևը հաղթել է՝ հավաքելով ընտրողների ձայների 97,7%-ը։ Արտահերթ նախագահական ընտրությունների ժամանակ սահմանվել է նաև մեկ այլ ռեկորդ՝ ընտրողների մասնակցությունը գերազանցել է 95%-ը[2]։

Վերջին տարիներին Ղազախստանի ԶԼՄ-ում սկսվել են ակտիվ քննարկումներ երկրի ղեկավարի իրավահաջորդի հարցի վերաբերյալ։ Հիմնական թեկնածուներն են երեքը՝ Կարիմ Մասիմով (ՂՀ նախկին վարչապետ, ԱԱԾ գործող ղեկավար), Դարիգա Նազարբաևա (ՂՀ խորհրդարանի սենատոր և Սենատի Արտաքին գործերի, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի ղեկավար), Սամաթ Աբիշ (գեներալ-լեյտենանտ, ԱԱԾ ղեկավարի առաջին տեղակալ)։ Կարևոր է նշել, որ Նուրսուլթան Նազարբաևի ընտրությունը կարող է պառակտել Ղազախստանի հասարակությունը և քաղաքացիական պատերազմ առաջացնել։ Համոզված ենք, որ այդ իսկ պատճառով Ղազախստանի Հանրապետության առաջնորդը կնախընտրի այլ ճանապարհ՝ աստիճանական և փափուկ անցում խորհրդարանական կառավարման համակարգի։ Իհարկե, դա տեղի կունենա միայն ՂՀ-ում իշխող կուսակցության՝ «Նուր Օթան»-ի ղեկավարության ներքո։ Այս գաղափարն աջակցվում է ոչ միայն Ղազախստանի

[2] Итоги выборов в парламент Казахстана: без особых сенсаций, https://www.dw.com/ru/%D0%B8%D1%82%D0%BE%D0%B3%D0%B8, 21.03.2016

քաղաքական ընտրանու, այլև երկրի բնակչության բացարձակ մեծամասնության կողմից: Դրա մասին վկայում են Ղազախստանի Հանրապետության վերջին խորհրդարանական ընտրությունների արդյունքները: Ըստ պաշտոնական տվյալների, 2016թ. մարտի խորհրդարանական ընտրություններում հաղթել է գործող նախագահի «Նուր Օթան» կուսակցությունը՝ հավաքելով ընտրողների ձայների 82,15%-ը (տե՛ս *Գծապատկեր 1*):

Գծապատկեր 1

Իշխանության ճյուղերի միջև լիազորությունների վերաբաշխման անհրաժեշտության մասին Ն.Նազարբաևը հայտարարել էր դեռ 2016թ. դեկտեմբերի 15-ին Աստանայում Ղազախստանի Անկախության 25-ամյակի հանդիսավոր արարողության ժամանակ: «Հատուկ հանձնաժողովը պետք է ուսումնասիրի այդ խնդիրները և առաջարկներ ներկայացնի համապատասխան օրենքները վերափոխելու համար»,- նշել էր նա իր ելույթում: 2017թ. հունվարի 11-ին Նուրսուլթան Նազարբաևը հրամանագիր է ստորագրել պետական իշխանության ճյուղերի միջև լիազորությունների վերաբաշխման աշխատանքային խմբի ձևավորման մասին: Իսկ հունվարի 13-ին Աստանայում տեղի ունեցավ առաջին նիստը Ղազախստանի Հանրապետությունում իշխանության մասնաճյուղերի լիազորությունների վերաբաշխման վերաբերյալ:

Նշված բարեփոխումներն, իհարկե, կարող են ամուր հիմք դառնալ՝ Ղազախստանի Հանրապետության՝ աստիճանաբար խորհրդարանական

կառավարման մոդելի անցման համար, որն այսօր հաստատվել է Հայաստանում: Ի դեպ, պետք է նաև նշել, որ Ղազախստանն ակտիվ ուսումնասիրում է Հայաստանի փորձը սահմանադրական փոփոխությունների ներդրման հարցում[3]:

Ղազախստանն ունի մի շատ կարևոր և յուրահատուկ գործոն, որը թույլ է տալիս վերջինիս խուսափել ներքին հակասությունների սրացումից և ամրապնդել քաղաքական կայունությունը: Դա բոլոր փոփոխություններին աստիճանաբար հարմարվելու Ղազախստանի հասարակության ունակությունն է: Շատ երկրների փորձը ցույց է տալիս, որ «սկզբում՝ ուժեղ պետություն և տնտեսություն, այնուհետև՝ քաղաքականություն» սկզբունքի խախտումը հանգեցնում է աղետների, որոնք անգամ կարող են «կոտրել» հասարակությունը: Այդ պատճառով որոշ երկրներում քաղաքական ռեժիմներ ոչնչանում են, մյուսներում նույնիսկ քաղաքացիական պատերազմներ են սկսվում: Անկասկած, Ղազախստանի Հանրապետության առաջնորդը լավ գիտակցում է այդ ամենը՝ ականատես լինելով այն ամենին, ինչ տեղի է ունենում Ուկրաինայում, Սիրիայում, Լիբիայում, Իրաքում և այլ երկրներում:

Ի դեպ, տոտալիտարիզմից ժողովրդավարության անցումային շրջան ապրող և քաղաքական կյանքի ժողովրդավարական ավանդույթներ չունեցող հասարակության համար ավտորիտար քաղաքական ռեժիմը և կառավարման խառը ձևը, ըստ երևույթին, մի ինչ-որ ժամանակով անխուսափելի են եղել: Խորհրդարանական կառավարման անցումը հազիվ թե կարճաժամկետ հեռանկարում իրականացվի: Ավելի շուտ, Ղազախստանի Հանրապետությունում կառավարման խորհրդարանական ձևին լիարժեք անցումը տեղի կունենա 2025 թվականին մոտ: Աշխարհի տարբեր տարածաշրջաններում ընթացող վերջին քաղաքացիական պատերազմների և արյունալի հակամարտությունների շարքը ցույց տվեց, որ անխոհեմ և արագացված դեմոկրատացումը չի երաշխավորում պետության կայունությունն ու հաջող տնտեսական արդիականացում չի ապահովում, ուստի Ղազախստանի նախագահը զգույշ կլինի և չի շտապի իր գործողություններում:

[3] *ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Թ.Ուրազանի հարցազրույցը,* http://arminfo.info/full_news.php?id=27021&lang=2, 24.08.2017

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 20.09.2018թ.
Թիվ 7 (96), 2018թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում